

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Պատերազմ՝ Թ՞ե՞ Խաղաղութիւն

Այս շաբթուայ ընթացքին Եւրոպական Խորհուրդի ղեկավար Շարլ Միշելի հրաւերով Պրիւքսէլի մէջ կայանալիք Փաշինեան-Ալիեի հերթական հանդիպումը: Կըսուի թէ այս հանդիպումին նպատակն է արժեւորել այն զարգացումները, որոնք տեղի ունեցան իրենց վերջին հանդիպումէն ասդին եւ ապա քննարկել հետագայ ուղիները՝ հասնելու անվտանգ, կայուն ու բարգաւաճ Հարաւային Կովկասի, ի շահ տարածաշրջանին մէջ ապրող ժողովուրդներուն: Կը նշուի նաեւ, որ ուշադրութեան կեդրոնին պիտի ըլլայ յատկապէս հաղորդակցութեան հարցը:

ԵԱՀԿ գործող նախագահ, Լեհաստանի արտաքին գործերու նախարար Ջաչկինե Ռաու վերջերս այցելելով Երեւան եւ Պաքու կոչ ըրած էր երկու երկիրներուն՝ բարեխղճօրէն մասնակցելու բանակցութիւններուն՝ հասնելու համար բոլոր չլուծուած խնդիրներու համապարփակ կարգաւորման:

Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներու վերջին հանդիպումէն ասդին շատ բան փոխուեցաւ ո՛չ միայն կովկասեան տարածաշրջանէն ներս, այլ ամբողջ աշխարհը մատնուեցաւ տագնապի: Ռուսաստան-Ուքրաինա պատերազմի հետեւանքով յառաջ եկան աշխարհաքաղաքական նոր դասաւորումներ:

Հակառակ որ, բոլորի ուշադրութիւնը կեդրոնացած է Ուքրաինայի վրայ, կը թուի թէ եւ Ռուսաստանը եւ Եւրոպան չեն անտեսած հարաւային Կովկասը, ուր կը շարունակէ տիրել սուր իրավիճակ՝ ատրպէյճանական կողմի Արցախի դէմ շղթայազերծած սադրիչ գործողութիւններուն պատճառաւ: Ռուսաստանի եւ Հայաստանի ղեկավարներուն միջեւ հեռաձայնային շփումները այս օրերուն դարձած են մնալուն: Եւրոպական կառոյցներու ղեկավարները՝ մէկը միւսի ետեւէն կ'այցելեն տարածաշրջան: Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Թոմի Պիլիքըն եւս անմասն չի մնար տեղի ունեցող զարգացումներէն՝ յաճախ գրուցելով վարչապետ Փաշինեանի հետ: Թէ այս բոլորը ի՞նչ բանի կրնան յանգեցնել, անշուշտ տակաւին յստակ չէ եւ ժամանակի կը կարօտի՝ կացութիւնը բիրտեղանալու համար:

Հայաստան իր կողմէ կ'ընդառնա թուրք տեսակի դիւանագիտական նախաձեռնութիւններուն, ցոյց տալով միջազգային հանրութեան, որ պատրաստ է Ատրպէյճանի հետ խաղաղութեան պայանագրի շուրջ բանակցութիւններ սկսելու, որուն մէջ կը մտնէ նաեւ Լեռնային Ղարաբաղի կարգաւորման հարցը, որ,

### Ղարաբաղի Պաշտպանութեան Բանակի Դուրսերունը Կը Նշանակէ ԼՂ-էն Հայերու Դուրսերում. Փաշինեան

ԵԱՀԿ գործող նախագահ, Լեհաստանի արտաքին գործերու նախարար Ջաչկինե Ռաու անցեալ շաբաթ այցելեց Երեւան եւ Պաքու: Հայաստանի մէջ գինք ընդունած էին նախագահը, վարչապետը, արտաքին գործերու նախարարը: Ատրպէյճանի մէջ ան հանդիպումներ ունեցած է նախագահ Իլհամ Ալիեւի եւ արտաքին գործերու նախարար Ճէյհուն Պալարամովի հետ: Եւրոպացի բարձրաստիճանի դիւանագետը վստահեցուցած է, որ ԵԱՀԿ յանձնառու է նպաստելու Հարաւային Կովկասի խաղաղութեան ու կայունութեան:

ԵԱՀԿ-ի յայտարարութեան մէջ կը նշուի, որ Ջաչկինե Ռաուի ուղեւորութիւնը կեդրոնացած էր անվտանգութեան առկայ մարտահրաւերներուն եւ կայուն խաղաղութեան ուղղուած ջանքերուն, ինչպէս նաեւ ԵԱՀԿ-ի եւ Հարաւկովկասեան տարածաշրջանի երեք պետութիւններուն միջեւ համագործակցութեան ամրապնդման վրայ: Կառավարութեան նիստին վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտնած է, որ խաղաղութեան բանակցութիւններուն Հայաստանը պատրաստ է լրացուցած առաջարկներու հիմքին վրայ: Փաշինեանի



ԵԱՀԿ գործող նախագահ Ջաչկինե Ռաու եւ վարչապետ Նիկոլ Փաշինեան Երեւանի մէջ կայացած հանդիպումի ընթացք

խօսքերը Ալիեւը «լաւ ուղերձ» որակած էր, միաժամանակ կրկին ընդգծած, որ Պաքուն արդէն կարգաւորած է դարաբաղեան հակամարտութիւնը:

Նոյն նիստին Փաշինեան ըսաւ. «Ատրպէյճանը փորձում է ոչ թէ լուծել ԼՂ հիմնախնդիրը, այլ՝ փակել այն, եւ այս գործողութիւնն է մեկնարկել Ասկերանի շրջանի Փառուխ գիւղից, որը շարունակուելու ահնայատ միտում ունի:

Ատրպէյճանը փորձում է բոլոր հայերին հանել Լեռնային Ղարաբաղից՝ այդպիսով հարցը փակուած համարելու համար»:

Անդրադառնալով Ատրպէյճանի պահանջի ձեւակերպման՝ Նիկոլ Փաշինեան ընդգծեց. «Լեռնային Ղարաբաղի Պաշտպանութեան բանակի դուրսերումը նշանակում է ԼՂ-ից հայերի դուրսբերում: Փա-

### Շարք Սը Օրէնսդիրներ Կը Պահանջեն Հետաքննել Ցեղասպանութեան Ձոհերու Վճարումներուն Սէջ Ծագած Խնդիրները



Չախէն աջ՝ Անթոնի Փորթանթիմոս, Տէքի Սփիլըր, Ատամ Շիֆ եւ Աննա Էշու

Քալիֆորնիոյ չորս ազդեցիկ օրէնսդիրներ կոչ ըրած են հետաքննել՝ Հայոց Ցեղասպանութեան զոհերու անունով 17,5 միլիոն տոլար արժողութեամբ խմբակային դատին վերաբերեալ «Լոս Անճելըս Թայմզի» հրատարակումը: Թերթի հետաքննութիւնը պարզած էր, որ խարդախութեան, միջոցներու շեղման եւ դիմումներու մերժման միջոցաւ վճարումները ծրագրուած ձեւով չեն կատարուած:

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան անդամներ՝ Ջէքի Սփիլըր եւ Աննա Էշու, որոնք միակ Ամերիկահայերը են Գոնկրէսէն ներս, ինչպէս նաեւ Գոնկրէսական Ատամ Շիֆ եւ Նահանգային ծերակուտական Էնթոնի Փորթանթիմոս յայտնած են, որ իրենք զգուած են տեղի ունեցածի

կապակցութեամբ: «Ես խորապէս մտահոգուած եւ վրդովուած եմ բարձրացուած հարցերով, - ըսուած է Փորթանթիմոսի յայտարարութեան մէջ: «Հայոց Ցեղասպանութիւնը սարսափելի պատմական վայրագութիւն էր, եւ զոհերու ժառանգները պէտք է չեն մերժուէին իրենց օրինական իրաւունքներէն:

Լոս Անճելըսահայերէք փաստաբաններ, որոնք շարքին՝ Մարկ Կիրակոս եւ Պրայըն Քափաթէք, մէկուկէս տասնամեակ առաջ ֆրանսական AXA ապահովագրական ընկերութեան հետ համաձայնութիւն կնքելով պէտք էր փոխհատուցելին ցեղասպանութեան զոհերի ժառանգորդներուն:

### Յովնան Արք. Տէրտէրեանի Յայտարարութիւնը

Ժամանակէ մը իվեր փոքրաթիւ խումբ մը բողոքի ցոյցեր կը կատարեն Կլէնտէլի մէջ գտնուող Հայաստանի Հանրապետութեան Հիւպատոսարանին առջեւ: Այս կապակցութեամբ Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ Յովնան Արք. Տէրտէրեանի հանդէս եկած է յայտարարութեամբ՝ կոչ ընելով զերծ մնալու նման երեւոյթներէ:

«Մեր պատմութեան այս ծանր ժամանակներուն բոլորիս պարտքն է աշալուրջ եւ նախանձախնդիր կեցուածք դրսևորել արտաշխարհի մեր դեսպանատուներու եւ հիւպատոսութիւններու հանդէպ, որոնք հայրենիքի ներկայութիւնը կը հաղորդեն մեզ այս ափերուն:

«Մեր զաւակները մեզ կը նային եւ արդար պատգամ կը սպասեն մեզմէ: Հայրենիքը խորհրդանշող մեր դեսպանատուներն ու հիւպատոսութիւնները կը ներկայացնեն մեզ յաջա օտար պետութեանց, եւ պարտ ենք մեր անվերապահ սէրն ու նուիրումը ցուցաբերել մեր ինքնութեան խորհրդանշող ներկայացնող դեսպանութեանց եւ հիւպատոսութեանց նկատմամբ, որոնք դիւանագիտական հաստատութիւններ են: Որպէս ազգի եւ եկեղեցու զաւակներ՝ վստահաբար



ԼՈՒՐԵՐ

Ընդդիմութեան Զանրահաւաքին Մասնակցած Է Շուրջ 11 Զազար Մարդ



Խորհրդարանական ընդդիմադիր ուժերուն հանրահաւաքը Ազատութեան հրապարակին վրայ

Ապրիլի 5-ին, Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ տեղի ունեցաւ խորհրդարանական ընդդիմադիր ուժերուն կողմէ հրաւիրուած հանրահաւաքը: «Պաշտպանելով Արցախը՝ պաշտպանենք Հայաստանը» կարգախօսով հանրահաւաքի աւարտին ցուցարարները շարժեցան դէպի Ֆրանսայի հրապարակ: Հանրահաւաքին ունկնդրի կարգավիճակով ներկայ էր նաեւ Հայաստանի երրորդ նախագահ

Սերժ Սարգսեանը: Ներկայ էր Ռոպերթ Քոչարեանը: Աւելի վաղ անոր մամուլի խօսնակը ըսած էր, որ վերջինս պիտի չկարողանայ ներկայանալ առողջական խնդիրներու պատճառով: «Իրագեկ Քաղաքացիների Միաւորումը» նկարահանման միջոցով իրականացուցած է ցոյցի մասնակիցներու հաշուարկ, որու արդիւնքով պարզուած է, որ Ազատութեան հրապարակին վրայ գտնուած է շուրջ 11,200 մարդ:

Ազատութեան Հրապարակին Փոխարէն Քոչարեանն Ու Սարգսեանը Թող Արցախ Երթան. Անդրանիկ Քոչարեան

Ազգային ժողովի իշխող «Իմ Քայլը» խմբակցութեան պատգամաւոր Անդրանիկ Քոչարեան կ'առաջարկէ Հայաստանի նախկին նախագահներ Ռոպերթ Քոչարեանին եւ Սերժ Սարգսեանին՝ հրապարակը հանրահաւաք կատարելու փոխարէն երթալ Արցախ եւ իրենց աջակցութիւնը աւելի շօշափելի դարձնել Արցախէն, շեշտելով որ Արցախի հետ կապուած խնդիրները պէտք է լուծել Արցախի մէջ: «Առաջարկում եմ, որ ընդդիմադիր երկու ուժերի առաջնորդները՝ իրենց աշխատակազմերով եւ իրենց համակիրներով, փորձեն կազմակերպեն մէկ ամսեայ բանակում Արցախում: Փոքր խմբերով գնան եւ համալրեն Պաշտպանութեան բանակի կորցրած հնարաւորութիւնները՝ իրենց նաեւ մասնակցութեամբ, իրենց նաեւ ֆինանսներով: Բայց այս պահի դրութեամբ առաջժամ բացի պետական իշխանութեան աջակցութիւնից, ընդդիմադիր ուժերի ծրագրային աջակցութիւն, գոնէ սրտացաւ



Պատգամաւոր Անդրանիկ Քոչարեան

աջակցութիւն, տեսանելի չէ մեր հասարակութեան համար, այդքանով էլ ես համոզուած եմ, որ իրենց միջոցառումը ոնց կը սկսուի, այնպէս էլ կ'աւարտուի», ըսաւ Անդրանիկ Քոչարեանը:

Պաքուի Սէջ Պահուող Հայ Գերիներու Վերադարձի Հարցով Ունինք Դրական Կանխատեսում. Սիրանուշ Սահակեան

«Պաքուում պահուող հայ գերիների վերադարձի հարցում ունենք դրական կանխատեսում, քանի որ բարձր մակարդակի բոլոր հանդիպումներից առաջ կամ յետոյ գերիների վերադարձ է եղել», ըսած է Սթրասպուրկի դատարանին մէջ հայ գերիներու շահերու ներկայացուցիչ Սիրանուշ Սահակեանը: «Այս քայլով կողմերը՝ Հայաստանը եւ Ատրպէյճանը բարձրացրել են միջազգային կառուցիչ հեղինակութիւնը, դեր տալով մարդասիրական խնդիրների լուծման գործում», ընդգծեց Սահակեանը: «Մենք չենք ունեցել իրաւական արարք, որը պահանջէր Ատրպէյճանին ազատ արձակել ռազմագերիներին», նշեց Սիրանուշ Սահակեանը:

«Որոշում կայ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան վարչութեան կողմից, որ Երեւան քաղաքի յառաջիկայ ՏԻՄ ընտրութիւններում ՔՊ ցուցակը գլխաւորելու է Տիգրան Աւինեանը, լինելու է քաղաքապետի թեկնածուն, բայց շատ կարեւոր է, որ այս տարանշատումը լինի, որ հիմա մեր քաղաքապետը Հրաչեայ Սարգսեանն է»:

Լեւոն Տէր Պետրոսեան Զանդիպած Է ԼՂՀ Նախագահ Արայիկ Յարութիւնեանի Հետ



Առաջին Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան իր առանձնատան մէջ կ'ընդունի Արցախի Նախագահ Արայիկ Յարութիւնեանը

ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան իր առանձնատան մէջ հանդիպած է ԼՂՀ նախագահ Արայիկ Յարութիւնեանի հետ: Ջրոյցի ընթացքին երկուստեք կարեւորուած է, որ ռուս-ուքրանական պատերազմի ընթացիկ փուլին մէջ, թէ՛ Արցախի ու

Հայաստանի իշխանութիւններէն, եւ թէ՛ ընդդիմադիր ուժերէն գերագոյշ հռետորաբանութիւն եւ գործողութիւններ կը պահանջուին ներքաղաքական հակասութիւնները չարելու եւ Հայաստանի ու Արցախի վիճակը աւելի եւս չբարդացնելու նպատակով:


Վճռաբեկ Դատարանը Վարոյթ Ընդունած Է Ռոպերթ Քոչարեանի Եւ Միւսներուն Գործով Գլխաւոր Դատախազին Բողոքը

Վճռաբեկ Դատարանը որոշած է քննութեան առնել Դատախազութեան հայցը եւ ռուսումնասիրել՝ օրինակա՞ն է արդեօք 2008-ի մարտեան արիւնակի իրադարձութիւններուն գործով Ռոպերթ Քոչարեանի եւ անոր նախկին երեք ենթականերու արդարացման վճիռը: Դատարանը պէտք է նաեւ որոշէ՞ արդեօք օրէնքը կը հակասէ՞ Սահմանադրութեան, որու հետեւանքով դատախազութիւնը հնարաւորութիւն չունի վերաորակելու Քոչարեանի եւ միւսներուն մեղադրանքը: Մէկ տարի առաջ Սահմա-

նադրական Դատարանը անվաւեր եւ հակասահմանադրական ճանչցած էր Քրէական օրէնագիրքի՝ սահմանադրական կարգը տապալելու յօդուածը, որով մեղադրանք առաջադրուած էր 2008-ի Մարտ 1-ի գործով անցնող երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանին ու անոր ենթականերուն: Սահմանադրականի որոշումէն երկու շաբաթ անց արդէն Առաջին Ատեանի դատարանը արդարացուցած էր Ռոպերթ Քոչարեանը, Սէյրան Օսանեանը, Եուրի Յաչատուրովը, Արմէն Գէորգեանը:

Երեւանի Քաղաքապետի Յաջորդ Ընտրութիւններուն ՔՊ-ն Պիտի Առաջադրել Տիգրան Աւինեանի Թեկնածութիւնը

Երեւանի քաղաքապետի յաջորդ տարի կայանալիք ընտրութիւններուն «Քաղաքացիական Պայմանագիր»-ը պիտի առաջադրէ նախկին փոխվարչապետ Տիգրան Աւինեանի թեկնածութիւնը, փոխանցեց իշխող ուժի հանրային կապերու համակարգող Վահագն Ալեքսանեանը:



Երեւանի քաղաքապետի թեկնածու Տիգրան Աւինեան

Գործող քաղաքապետ Հրաչ Սարգսեանը օրերս լրատուամիջոցներէն մէկուն հետ զրոյցին ըսած էր, որ Աւինեանի համաձայնութեան պարագային՝ գայն փոխքաղաքապետ պիտի նշանակէ: Իշխող ուժէն ըսին, որ, այո՛, Աւինեանը նախ փոխքաղաքապետ պիտի նշանակուի, իսկ միւս տարի արդէն նախընտրական ցուցակը պիտի գլխաւորէ: «Որոշում կայ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան վարչութեան կողմից, որ Երեւան քաղաքի յառաջիկայ ՏԻՄ ընտրութիւններում ՔՊ ցուցակը գլխաւորելու է Տիգրան Աւինեանը, լինելու է քաղաքապետի թեկնածուն, բայց շատ կարեւոր է, որ այս տարանշատումը լինի, որ հիմա մեր քաղաքապետը Հրաչեայ Սարգսեանն է»:

եանն է եւ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը իրող թիմով աջակցում է նրան իր գործում: Պարոն Աւինեանի մասով էլ կայ որոշում, որ նա պէտք է շուտով դառնայ Երեւանի փոխքաղաքապետ», ըսաւ Վահագն Ալեքսանեանը:

# ԼՈՒՐԵՐ

## Իտալիան Աջակցութիւն Կը Յայտնէ Մինսքի Խմբակի Համանախազահուծեան Եւ Շարլ Միշէլի Ջանքերուն



Իտալիոյ արտաքին գործերու նախարար Լուիջի Տի Մայօ վարչապետ Նիկոլ Փաշինեան հետ հանդիպումի ընթացքին

Իտալիան աջակցութիւն կը յայտնէ ԵԱՀԿ Մինսքի խմբակի համանախազահուծեան եւ Եւրոպական Խորհուրդի նախագահ Շարլ Միշէլի ջանքերուն՝ միտուած Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման, Հարաւային Կովկասի տարածաշրջանին մէջ կայունութեան եւ խաղաղութեան հաստատման, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու կարգաւորման երկխօսութեան: Այս մասին Հայաստանի վարչապետին հետ հանդիպման ընթացքին նշած է աշխատանքային այցով Հայաստան գտնուող Իտալիոյ արտաքին գործերու եւ միջազգային համագործակցութեան նախարար Լուիջի Տի Մայօն:

Հարաւային Կովկասի մէջ ստեղծուած իրավիճակին վերաբերող հարցերը քննարկելով՝ Նիկոլ Փաշինեան իր դիտարկումները ներկայացուցած է Լեռնային Ղարաբաղի շուրջ տեղի ունեցող գործընթացներուն վերաբերեալ եւ ընդգծած է միջազգային հանրութեան համարժէք արձագանգին կարեւորութիւնը՝ Ատրպէյճանի կողմէ իրականացուող սադրիչ գործողութիւններուն:

Նիկոլ Փաշինեան կարեւորած է ԵԱՀԿ Մինսքի խմբակի ծիրին մէջ Լեռնային Ղարաբաղի հակա-

մարտութեան համապարփակ կարգաւորման անհրաժեշտութիւնը՝ շեշտելով Արցախի կարգավիճակի յտակացման, անվտանգութեան ապահովման եւ արցախահայութեան հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան կարեւորութիւնը:

Նիկոլ Փաշինեան եւ Լուիջի Տի Մայօ խօսած են նաեւ երկկողմ փոխգործակցութեան մասին՝ ընդգծելով առեւտրաշրջանառութեան ծաւալներու աւելացման, ներդրումային համատեղ ծրագրերու իրականացման ուղղութեամբ հետեւողական քայլերու իրականացումը:

Իտալիոյ եւ Հայաստանի արտաքին գործերու նախարարները հանդէս եկան համատեղ յայտարարութեամբ:

Այնուհետեւ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրեանը ընդունած է իտալացի պաշտօնեան: Նախագահը ընդգծած է, որ այս տարածաշրջանին մէջ ղէպի երկարատեւ եւ կայուն խաղաղութիւն տանող ճանապարհը երկխօսութիւնն է եւ վստահութեան մթնոլորտի ձեւաւորումը: Խաչատուրեան ընդգծած է Արցախի կարգավիճակի յտակացման, այնտեղ ապրող մարդոց անվտանգութեան ապահովման եւ հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան կարեւորութիւնը:

## Փաշինեան Եւ Թիմ Լոուրըն Քննարկած Են Լեռնային Ղարաբաղի Շուրջ Ստեղծուած Իրավիճակը

Վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ Միացեալ Թագաւորութեան խորհրդարանի Մեծն Բրիտանիա-Հայաստան բարեկամական խումբի ղեկավար Թիմ Լոուրըն քննարկած են Հարաւային Կովկասի մէջ, մասնաւորապէս, Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծուած իրավիճակը:

Վարչապետ Փաշինեան իր դիտարկումները ներկայացուցած է Լեռնային Ղարաբաղի շուրջ տեղի ունեցող գործընթացներուն վերաբերեալ եւ ընդգծած է միջազգային հանրութեան համարժէք արձագանգին կարեւորութիւնը՝ Ատրպէյճանի կողմէ իրականացուող սադրիչ գործողական գործողութիւններուն:

Գործադիրի ղեկավարը անդրադարձած է Արցախի մէջ ատրպէյճանական գործողութիւններուն հետեւանքով յառաջացող մարդասիրական խնդիրներուն, Ատրպէյճանի գինուած ուժերու վերահսկողութեան տակ անցած տարածքներուն մէջ հայկական մշակութային ժառանգութեան ոչնչացման քայլերուն, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանագծման եւ սահմանազատման, տարածաշրջանային ապաշրջափակման հնարաւորութիւններուն, ինչպէս նաեւ հայթրքական երկխօսութեան:

Խօսելով երկու երկիրներու համագործակցութեան մասին, Թիմ Լոուրըն համոզմունք յայտնած է, որ այն խորհրդարանական մակարդակով յառաջիկային պիտի շարունակէ ամրապնդուիլ, եւ իրենք պիտի ներդնեն բոլոր ջանքերը՝ նպաստելու երկկողմ քաղաքական ու տնտեսական կապերու խորացման: Ան կարեւորած է Հայաստանի մէջ իրականացուող ժողովրդավարական բարեփոխումները եւ համոզմունք յայտնած է, որ անոնց արդիւնաւէտ իրականացումը պիտի նպաստէ Հայաստանի հետագայ յառաջընթացին:

## Լեռնային Ղարաբաղի Կարգավիճակի Հարցը Սկզբունքային Է. Միրզոյեան

Հայաստանի ու Ատրպէյճանի ղեկավարներու Պրիւքսէլի մէջ կայանալիք հանդիպման ընդառաջ, պաշտօնական երեւանը կրկին յայտարարեց՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը սկզբունքային է:

Տարածաշրջանային այցով Հայաստան գտնուող ԵԱՀԿ գործող նախագահ, Լեհաստանի արտաքին գործերու նախարար Զպիկնե Ռաուի հետ հանդիպումէն յետոյ համատեղ ասուլիսին ընթացքին, արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավար Արարատ Միրզոյեան նաեւ ընդգծեց, որ Երեւանը կ'ակնկալէ, որ Ուքրաինոյ մէջ ծաւալած ռազմական գործողութիւնները ԵԱՀԿ օրակարգէն դուրս չեն թողեր Ղարաբաղի հակամարտութիւնը:

«Ինչպէս գիտէք, Ատրպէյճանը որոշակի առաջարկներ է փոխանցել հայկական կողմին, մենք այս առաջարկները համարել ենք ընդունելի՝ միաժամանակ ասելով, որ դրանք այնուամենայնիւ ամբողջապէս չեն հասցէագրում խնդիրների ողջ օրակարգը: Եւ մենք մեր առաջարկներով ամբողջացրել ենք այս օրակարգը՝ աւելացնելով, որ մեզ համար սկզբունքային է Լեռնային Ղարաբաղի իրաւունքների եւ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Ակնկալում ենք, որ ԵԱՀԿ Մինսքի համանախազահութիւնը յառջիկայում այլուամենայնիւ կը կարողանայ կազմակերպել խաղաղ բանակցութիւններ այս օրակարգով եւ համապարփակ խաղաղութեան պայմանագիր կնքելու նպատակով», նշեց Միրզոյեան:

«Ուզում եմ վերահաստատել հայկական կողմի պատաստակամութիւնը՝ սահմանագոտում ձեռնարկել կայունութեան բարձրացման քայլեր եւ այնուհետեւ ձեռնամուխ լինել նաեւ Հայաստան-Ատրպէյճան սահմանագատման գործընթացի մեկնարկին: Ուզում



ՀՀ արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան

եմ նշել նաեւ, որ Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ, ինչպէս գիտէք, ընթանում են բանակցութիւններ, խորհրդակցութիւններ ճանապարհային եւ տնտեսական ուղիների ապաշրջափակման վերաբերեալ, եւ այստեղ եւս մենք հանդէս ենք եկել առաջարկներով եւ սպասում ենք Ատրպէյճանի արձագանգին», ըսաւ նախարար Միրզոյեան:

Անդրադառնալով Արցախի մէջ ստեղծուած իրավիճակին, Հայաստանի արտաքին գործերու նախարարը չի շեցուց, որ նախորդ ամիս ցուրտ եղանակային պայմաններու մէջ Ատրպէյճանը երկու անգամ անջատած էր Արցախի կազմատակարարումը, իսկ Մարտ 24-էն ատրպէյճանական զինուած ուժերը ներխուժած են Ասկերանի շրջան:

Միրզոյեանը եւս մէկ անգամ ընդգծեց, որ, չնայած Մինսքի խմբակի համանախազահող երկիրներու յորդորներուն ու ուսական կողմի հաւաստիացումներուն, ատրպէյճանական զինուած առաջօր կը շարունակէ մնալ ուս խաղաղապահներու պատասխանատուութեան գօտիին մէջ:

## ՄԱԿ-ի Մարդու Իրաւունքներու Խորհուրդը Ընդունած Է Հայաստանի Ներկայացուցած «Ցեղասպանութեան Կանխարգելում» Բանաձեւը

ՄԱԿ-ի Մարդու Իրաւունքներու Խորհուրդի 49-րդ նստաշրջանի ընթացքին համաձայնութեամբ ընդունուած է Հայաստանի կողմէ առաջարկուած «Ցեղասպանութեան կանխարգելում» բանաձեւը:

Արտաքին Գործերու Նախարարութեան լրատուականի փոխանցմամբ՝ բանաձեւը, որ աւանդաբար կը ներկայացուի Հայաստանի կողմէ, գնահատելով ներկայիս վտանգներն ու մարտահրաւէրները, կը նախանշէ այն քայլերը, որոնք պէտք է միասնականօրէն իրականացուին ՄԱԿ-ի անդամ երկիրներու կողմէ ցեղասպանութեան արհաւիրքը կանխելու, անոր ճանաչման, արդարութեան վերականգնման, փոխհատուցման, մեղաւորները պատժելու եւ հաշտեցնողականութիւնը ապահովելու ուղղութեամբ:

Բանաձեւը լայն աջակցութիւն կը վայելէ, ինչի վկայութիւնն է բոլոր հինգ տարածաշրջանային խումբերը ներկայացնող երկիրները:

րու կողմէ անոր համահեղինակումը, նշուած է հաղորդագրութեան մէջ:

Այս տարի բանաձեւը յառաջ կը քաշէ այնպիսի խնդիրներ, ինչպիսին են հակամարտութեան վտանգներու գնահատման եւ գանոնք թոյլ չտալուն ուղղուած քայլերու ձեռնարկումը, նոր արհեստագիտութիւններու չարաշահումը, այդ շարքին՝ ընկերային հարթակներու միջոցով ապատեղեկատուութեան տարածման վտանգները, կը վերահաստատէ Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին ուխտի համընդհանուր վաւերացումը ապահովելու անհրաժեշտութիւնը:

Բանաձեւը կ'առաջարկէ ՄԱԿ-ի շրջանակին մէջ կազմակերպել համաժողով, որ նուիրուած պիտի ըլլայ Ուխտի 75-ամեակին: Համաժողովի ընթացքին կը նախատեսուի նաեւ քննարկել ընկերային հարթակներու եւ գանոնք որպէս ատելութեան գործիք օգտագործելու անթոյլատրելիութիւնը:



### Համահայկական եւ Միջ-Կրօնական Աղօթք եւ Ձօրակցութիւն Յանուն Հայրենիքի եւ Հայոց Բանակին



Իր տեսակին մէջ եզակի հաւաքույթ մըն էր որ տեղի ունեցաւ անցեալ Կիրակի, 3 Ապրիլ, 2022 Պրնպէնքի Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ: Շուրջ 500 հոգի եկած էին միատեղ աղօթելու եւ իրենց զօրակցութիւնը յայտնելու «Յանուն Հայրենիքի եւ Հայոց Բանակին»: Ներկաներուն մէջ էին Լոս Անճելոսի քաղաքապետ Էրիկ Կարսեթի, ինչպէս նաեւ քաղաքական եւ կրօնական բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Սոյն միջոցառումը կազմակերպող հայ գաղութի յարանուանութեանց առաջնորդներ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան, Գերպ. Միքայէլ Եպս. Մուրատեան եւ Վեր. Հենրիկ Շահնազարեան, հայրենաշունչ ելոյթներով, հայոց բանակի քաջամարտիկներու սիրագործութիւններն ու նուիրումը արժեւորեցին, զանոնք նկատելով սրբազան պարտականութիւն սուրբ Հայրենիքի պաշտպանութեան համար: Տեղի ունեցաւ նաեւ հոգեհանգստեան արարողութիւն, որուն իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Արցախի նախկին առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան եւ Մուշեղ Արք. Մարտիրոսեան ու այլ հոգեւորականներ: Անոնք աղօթեցին մեր նահատակ հերոս զինուորներու հոգիներու խաղաղութեան

համար: Յատկապէս այս օրերուն՝ երբ Հայրենիքն ու Արցախը կ'ապրին ծանր օրեր:

Հայութեան արդար դատի ի խնդիր զօրակցական ելոյթներով հանդէս եկան նաեւ Հարաւային Գալիֆորնիոյ տարբեր յարանուանութեանց (ղպտի, ասորի, կաթողիէ, աւետարանական) եկեղեցիներու առաջնորդներ եւ ներկայացուցիչներ, ստեղծելով էքզիսիցի միջնորդութիւն իրենց հայրենիքի պաշտպանութեան համար:

Իր ելոյթին մէջ Լոս Անճելոսի քաղաքապետ Էրիկ Կարսեթիին բարձր գնահատեց հայ ժողովուրդի նուիրուածութիւնն ու մարտունակութիւնը եւ միաժամանակ դատապարտեց բռնարարներն ու ոտնձգութիւնները խաղաղ բնակիչներուն դէմ:

Աղօթքի եւ զօրակցութեան այս խորհրդաւոր միջոցառումն աւարտեցաւ Արեւմտեան Թեիմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Սրբազանի եզրափակիչ խօսքով: Ան յատկապէս շեշտեց. «Մնանք հաստատ մեր ուխտին մէջ, մնանք աղօթքի մէջ եւ ամենէն կարեւորը միմիանց սիրենք յանուն հայրենիքի անասանութեան, որն այս փորձութեան ժամանակներուն արիւնքամ վիճակի մէջ է:

Խոնարհինք մեր սրբազան հայրենիքի առջեւ, քանզի ան պարզեւն է Աստուծոյ»:

### Պատերազմ՝ Թ՞է Խաղաղութիւն

#### Շարունակուած էջ 1-էն

ինչպէս յայտարարեց արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեանը, Հայաստանի համար սկզբունքային հարց է:

Այս կացութեան առջեւ ընդդիմութիւնը հանրահաւաք կազմակերպած էր բողոքելու համար իշխանութիւններուն առած քայլերուն դէմ, աղմկելով, որ խաղաղութեան մասին խօսելով Փաշինեան կը պատրաստուի Արցախը յանձնել Ատրպէյճանին: Առաջին անգամ չէ որ, նախկին իշխանութիւնները նման «ահագանգ» կը հնչեցնեն: Անցնող ամիսներուն աղմուկ բարձրացուած էին Սիւնիքի յանձնումի եւ կամ Ջանգեզուրով միջանցք տալու մասին եւ նման այլ յոռետեսական կանխատեսումներ, որոնք բոլորն ալ սխալ դուրս եկան: Ամէն անգամ որ, Ռուսաստան եւ կամ Երոպական կառոյցներ Փաշինեան-Ալիւի հանդիպման նախաձեռնութեամբ հանդէս գան, ընդդիմութեան շրջանակներուն կողմէ կը կրկնուի «Արցախը ծախելու» մասին յանկերգը:

Բոլորս ալ գիտենք որ, թուրքիան ու Ատրպէյճանը հայութեան համար թշնամի երկիրներ են: Պետութիւններ կը բանակցին իրենց թշնամիներուն հետ եւ ո՛չ թէ բարեկամներուն: Մեր աչքին առջեւ ունինք Ուքրանիոյ օրինակը, որ ռմբակոծումներու, աւերուածութեան, միլիոնաւոր գաղթականներու եւ հազարաւոր զոհերու պայմաններուն տակ բանակցութիւններ կը վարէ Ռուսաստանի հետ՝ իր երկրի ապագային շուրջ, իսկ նախագահ Ձելենսքի հանդիպում կը պահանջէ Ռուսաստանի իր պաշտօնակիցին հետ:

Իշխանութիւններու վարած խաղաղութեան քաղաքականութիւնը ամենէն իրատեսական է ներկայ հանգրուանին: Մէկ կողմէ բարի կամեցողութիւն ցոյց տալով կը փորձուի Հայաստանն ու Արցախը հեռու պահել նոր պատերազմէ, իսկ միւս կողմէ ժամանակ շահելով կը վերակազմակերպուի ու կ'արդիականացուի բանակը, որմէ ետք արդէն կը գտնուինք նոր իրականութեան առջեւ:

**Գ. ԽՈՏԱՆԵԱՆ**  
**«ՄԱՍԻՍ»**

### Գերսամ Ահարոնեանի Մահուան 40-րդ Տարեկիցի Յուշ Երեկոն



Կիրակի Ապրիլ 3, 2022, ընտրանի հասարակութիւն մը փութացած էր Փաստինայի Թէքէեան Մշակութային Միութեան Պէշկէթիւրեան սրահը, ուր տեղի ունեցաւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան ղեկավար եւ ՌԱԿ-ի «Զարթօնք» թերթի խմբագիր Գերսամ Ահարոնեանի մահուան 40-րդ տարեկիցի եւ իր անունը կրող մասնաճիւղի հիմնադրութեան 40-ամեակի յրբեւակնան հանդիսութիւնը:

Գերսամ Ահարոնեանի մասին

հանգամանօրէն արտայայտեցաւ Տոքթ. Գրիգոր Ատանալեան (Գ.Ա. Կուսակցական եւ Հասարակական Գործիչը), Խաչիկ Ճանոյեան (ՌԱԿ, Գերսամ Ահարոնեանի ակումբ), Իսկ Օշին Քէշիշեան (Գ.Ա. խմբագիրը եւ հրատարակագիրը):

Գործադրութեամբ պատշաճ յայտագիր մը, մասնակցութեամբ Անի Մարտիկեանի (ասմունք) եւ Դաւիթ Սամուէլեանի (երգ):

Բարձրորակ ձեռնարկ մը արդարեւ, որուն մասին կ'անդրադառնանք առանձին:

### Հ.Յ.Դ.ի 131 Ամեակի Նշումը

Կիրակի 3 Ապրիլ, 2022, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադրութեան 131-ամեակը նշուեցաւ Կլենտօնի Ալէքս թատրոնին մէջ: Օրուան կարգախօսն էր «Պիտի Կերտենք Նոր Արշալոյս»...:

Սոյն պաշտօնական հանդիսութեան կը սպասուէր որ ելոյթ ունենար Հ.Յ.Դ.-ի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ եւ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Իշխան Սաղաթէլեան, սակայն այդ

մէկը տեղի չունեցաւ եւ փոխարինութեամբ տեսակապի պատգամով մը: Իշխան Սաղաթէլեան իր այդ ելոյթով կը քննադատէր Հայաստանի ներկայ իշխանութիւններու գործունէութիւնը եւ համաժողովրդային միասնութեան կոչ կ'ուղղէր սփիւռքի հայութեան: Ելոյթ ունեցաւ նաեւ Ազգային ժողովի պատգամաւոր Արթուր Խաչատուրեան:

Գործադրութեամբ պատշաճ յայտագիր:

## AEBU SCHOLARSHIP PROGRAM

# 2022

## APPLICATIONS NOW OPEN

Through June 30, 2022

EMPOWERING OUR YOUTH FOR A BRIGHTER FUTURE



To apply, visit our website  
**WWW.AEBU.ORG**

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.



**ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION**  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

626•344•7321  
AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE  
1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

## Pashinyan, Blinken Discuss Increased Tensions in Karabakh and US-Armenian Relations



YEREVAN — Prime Minister Nikol Pashinyan spoke with U.S. Secretary of State Antony Blinken by phone on Tuesday before flying to Brussels for potentially crucial talks with Azerbaijan's President Ilham Aliyev.

An Armenian government statement on the phone call said they discussed, among other things, "processes taking place in the South Caucasus" and "increased tensions over Nagorno-Karabakh."

"The parties stressed the impor-

ance of ensuring stability and peace in the region, emphasizing the importance of the OSCE Minsk Group co-chairs' format," the statement said, adding that they also touched upon the Armenian-Azerbaijani summit that will be hosted on Wednesday by Charles Michel, the top European Union official.

The scheduled trilateral meeting with Michel was announced a week

Continued on page 3

## Karabakh Will Never Agree to Live Under Azeri Rule – Davit Babayan


STEPANAKERT — Nagorno-Karabakh Armenian leadership and population will never agree to live under Azerbaijani rule, NKR Foreign Minister Davit Babayan said on Thursday.

"This is the red line which we will never cross regardless of anything," Babayan told RFE/RL's Armenian Service. "Whatever promises Azerbaijan could give us, those promises won't be serious, they won't be fulfilled."

"For us, there is no chance of survival within Azerbaijan," he said. "We would either be turned into a concentration camp or there would be a genocide and ethnic cleansing of Armenians."

Therefore, the Karabakh Armenians will not even discuss any status of their region within Azerbaijan, added Babayan.

Babayan said that the Karabakh leadership is making "intensive" efforts to stabilize and improve the secu-



rity situation with the help of Russian peacekeeping forces stationed in Karabakh.

"We must stay strong, make the right geopolitical choices and understand that we have no right to make mistakes at this historic moment," he said.

## Top Lawmakers Demand Investigation of Corruption in Armenian Genocide Victim Payments



LOS ANGELES — Four influential California lawmakers called this week for an investigation into a \$17.5-million class-action settlement on behalf of Armenian genocide victims that a Times investigation found had been marred by fraud, diverted funds and a rejection rate of 92%. LA Times reports.

U.S. Reps. Jackie Speier (D-Hillsborough) and Anna Eshoo (D-Menlo Park), the only Armenian Americans in Congress, along with Rep. Adam Schiff (D-Burbank) and state Sen. Anthony Portantino (D-La Cañada Flintridge), chair of the Senate Appropriations Committee, said they were disgusted by misconduct The Times detailed in a report last week.

"I am deeply concerned and outraged by the issues raised," Portantino said in a statement. "The Armenian Genocide was a horrendous historical atrocity and descendants of those murdered should not be victimized or be denied their rightful settlements."

Three Armenian American attorneys from Los Angeles, including prominent lawyers Mark Geragos and

Brian Kabateck, secured the settlement with the French insurance company AXA a decade and a half ago. The funds were supposed to compensate the families of genocide victims with unpaid insurance policies and support Armenian charities.

The Times investigation found that the French nonprofit was never established; some of the money was sent to the pet charities of lawyers involved in the case, including their alma mater; and hundreds of thousands of dollars were directed to sham claimants. Less than 8% of claims submitted by Armenians around the world were approved, despite what in many cases was overwhelming evidence that the applicants were rightful heirs.

"It's clear by the dismal claims approval rate and finger-pointing that something is rotten in Denmark, or Glendale, or France as the case may be," said Speier, the co-chair of the Congressional Armenian Caucus, in a statement.

Continued on page 4

## UN Human Rights Council Adopts Genocide Prevention Resolution Authored by Armenia



On March 31 the 49th session of the UN Human Rights Council adopted by consensus the resolution on Prevention of Genocide.

This Resolution has been traditionally authored and initiated by Armenia. While assessing the current risks and challenges, the resolution outlines the necessary joint efforts by the UN member states to prevent the scourge of genocide, including through recognition, reparation, truth, bringing perpetrators to justice and accountability.

The Resolution enjoys wide support, which has been demonstrated through wide co-sponsorship by States from all five UN regional groups.

In its current iteration the Resolution addresses issues such as con-

flict risk analysis and conflict prevention efforts, as well as the misuse of new technologies, in particular social media platforms, as well as the dangers of misinformation spread through them.

The Resolution reaffirms the need for universal ratification of the 1948 Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide.

The Resolution proposes to convene an Intersessional meeting within the framework of the UN to mark the 75th anniversary of the Convention. The meeting will also discuss the role of social media platforms and their instrumentalization by those seeking to spread hate leading to real-world discrimination and violence.

## Azerbaijan Taking Advantage of the Geopolitical Situation to Continue Policy of Ethnic Cleansing in Artsakh – FM Mirzoyan



YEREVAN — Azerbaijan’s invasion of Nagorno-Karabakh was a pre-planned aggression, Armenian Foreign Minister Ararat Mirzoyan said at a joint press briefing last Friday with the OSCE Chairman-in-Office, Polish Foreign Minister Zbigniew Rau in Yerevan.

Pointing out Azerbaijan’s invasion of the Armenian village of Parukh in Nagorno-Karabakh on March 24, which is in the zone of Russian peacekeepers’ responsibility, Mirzoyan said Azerbaijan takes advantage of geopolitical developments to continue its policy of ethnic cleansing in Nagorno-Karabakh.

“This tense situation persists to this day. This invasion and incitement of hostilities was preceded by incessant firing towards Armenian settlements and civilian infrastructures. Azerbaijan has disrupted the operation of the only vital gas pipeline that ships natural gas from Armenia to Nagorno-Karabakh amid harsh winter cold,” he said.

“In this situation, a clear response of the OSCE Chairman-in-Office and the international community becomes imperative, and the involvement of international humanitarian organizations in Nagorno-Karabakh becomes urgent to prevent a humanitarian crisis,” he said.

Mirzoyan said that the OSCE co-chairing countries have already delivered a clear assessment of the latest escalation of the situation in Nagorno

Karabakh, confirming that it is a consequence of Azerbaijani troop movements.

Mirzoyan said that Poland’s presidency in OSCE has coincided with the serious security crisis in Europe caused by the military actions in Ukraine. He noted that the situation has attracted much of the OSCE’s attention.

“However, we expect the Nagorno-Karabakh conflict issue to remain on the OSCE agenda,” he said.

Mirzoyan stated that Armenia plans to bring up the issue of Nagorno-Karabakh’s status during upcoming talks on an Armenian-Azerbaijani peace treaty sought by Azerbaijan.

Mirzoyan also said Yerevan hopes that Russia, the United States and France, which co-chair the OSCE Minsk Group, will mediate those talks despite their bitter standoff over the conflict in Ukraine.

“We hope that the co-presidency of the OSCE Minsk Group will manage after all to organize peace talks with this agenda and with the aim of signing a comprehensive peace treaty,” he added at the joint news conference Zbigniew Rau.

The Armenian FM particularly pointed out that 1.5 years after the end of 44-day war in the conflict zone Azerbaijan continues to violate international humanitarian law, as well as its November 9 trilateral statement, keeping Armenian prisoners of war in captivity.

## US Ambassador Lynne Tracy Meets with Relatives of Armenian POWs

On March 29, US Ambassador to Armenia Lynne Tracy met with relatives of Armenian servicemembers who were captured in 2020 and 2021—some of whom have received long sentences from Azerbaijani courts, some whose fates are currently unknown.

The discussion focused on human rights issues, including point eight of the November 2020 trilateral ceasefire statement by Armenia, Azerbaijan, and Russia on the exchange of prisoners of war, hostages and other detained persons, and dead bodies, and the Geneva Convention.

“We urge the release of all prisoners as well as increased efforts to obtain information about the fate of missing servicemembers, including



from the 1990s, noting the pain of families who do not know their loved ones’ whereabouts or fate,” the US Embassy said in a statement.

## EU, NATO Military Attachés Visit RA Defense Ministry Airbase, Confirm All Su-30SMs are in Armenia



YEREVAN — On March 31, the defense attachés of the EU and NATO member states accredited in the Republic of Armenia visited the airbase N of the Ministry of Defense of the Republic of Armenia.

The commander of the airbase, Air force Colonel Samvel Tavadyan presented the daily activities of the military unit to the foreign guests and gave answers to the questions they were interested in.

Afterwards, the defense attachés visited the facilities in the military unit and were introduced to the aviation equipment.

The visiting personnel were most interested in SU 30-SM aircrafts. Expressing gratitude for the reception, the defense attachés noted that during the visit they were once again con-

vinced that all 4 SU-30SM aircrafts were in the home base, and the information spread in the Azerbaijani and Turkish press, that the aircrafts were taking part in the hostilities in Ukraine, did not correspond to reality.

The Armenian Defense Ministry had denied reports by Azerbaijani TV channel Haber Global, which broadcasts in Turkey, citing unknown sources in Turkish intelligence, claiming that Armenia had transferred four Su-30 aircraft to Russia for use in military operations against Ukraine.

The Ministry also said that another statement in the same report claiming that Armenia is one of the main directions for transferring mercenaries from Syria for fighting in Ukraine is also false.

## Azerbaijan Puts Russian MP Mikhail Delyagin on the International Wanted List

MOSCOW — The Prosecutor General’s Office of Azerbaijan has put Member of the Russian State Duma Mikhail Delyagin on the international wanted list, the ministry’s press service said on Wednesday.

A criminal case has been initiated under Article Articles 101.2 (Open calls to unleash an aggressive ear), 214.2.3 (Terrorism with the use of firearms and items used as weapons), 283.2.1 and 283.2.2 (Inciting national, racial, social or religious hatred and enmity) of the Criminal Code of Azerbaijan.

“The Azerbaijani side has applied to the relevant structures of a number of friendly states with a request to immediately detain him if he ends up on the territory of these countries,” the press service of the Prosecutor General’s Office said.

The criminal case against the Russian MP was initiated after he announced on the air of the federal TV channel “Russia-1” that the Russian Armed Forces could strike the oil infrastructure of Azerbaijan against the backdrop of the aggravation of the situation in Nagorno-Karabakh. In addition, Delyagin conducted a survey of similar content on his Telegram channel, according to TASS.

Delyagin has reacted to Azerbaijani claims denying statements attributed to him, “I have not called



for the bombing of Azerbaijan with conventional or nuclear weapons,” he said.

He expressed the opinion that the information about him being declared internationally wanted by the Prosecutor General’s Office of Azerbaijan “is either fake or a journalistic mistake.”

“Otherwise, we must admit that there is no one left in the Prosecutor General’s Office of Azerbaijan who understands Russian or can use the services of a translator. If we assume that this news is true, it is very sad, because the people, whose legal system has nothing to do with reality, are waiting for very interesting revelations, which will not always be pleasant,” he wrote.



## Councilman Agajanian Announces Bid for Re-Election

GLENDALE, CA – Councilmember Vrej Agajanian has announced that he is running for re-election in the City of Glendale's June 7 municipal election. Agajanian was first elected to the City Council in 2017 and has served as the City's Mayor.

During his tenure, Agajanian introduced measures in the City, including an increase in affordable housing by adding 507 units during a span of 2 years resulting in an approximate increase of 40% of affordable housing built in the past 44 years. Agajanian was also a part of the City Council's led efforts in providing over a thousand vulnerable seniors with \$300 monthly payments for two years and provided \$5000 in payments to struggling small businesses in to keep them afloat.

"My objectives remain increasing affordable housing and resources for seniors, youth and vulnerable populations, as well as modernizing our public health system," said Councilman Agajanian. "It has been a great pleasure working for the constituents of Glendale and I look forward to serving the City for many years to come as we face challenges and work hard towards positive change together as a community," he added.

A California certified engineer for 40 years, he worked as a profes-



sional engineer with Syska Hennessy Group, serving as project engineer for the San Diego Naval Medical Center. He championed STEM education as the former president of the Armenian Engineers and Scientists of America and championed youth charity projects as a former board member and current member of KIWANIS Glendale for the past 16 years.

Agajanian is also president and CEO of two successful television stations operating in Glendale, broadcasting international news and arts programming. For the past two decades, he has also hosted a nightly informative news program focusing on local and national social and political news.

## British MPs Visit Tsitsernakaberd Memorial Complex



YEREVAN-- On April 1, the members of the Head of the Friendship Group Great Britain-Armenia of Parliament of the United Kingdom Tim Loughton accompanied by the members of the delegation led by the Head of the RA NA Friendship Group Great Britain-Armenia Eduard Aghajanyan and the NA deputy Mariam Poghosyan visited Tsitsernakaberd Memorial Complex.

The guests laid flowers at the eternal fire perpetuating the memory of the Armenian Genocide victims. In the Armenian Genocide Museum-Institute, getting acquainted with the exhibits documenting the genocide, the members of the Friendship Group left a note in the Book of Honourable Guests.

The Head of the Friendship Group Great Britain-Armenia of Parliament of the United Kingdom Tim Loughton noted: "We should never forget the lessons of history. Places like this remind us that we should be vigilant

towards the events happening around us. I have greatly appreciated our visit. This is a very special place."

The member of the House of Lords of Parliament of the United Kingdom of Great Britain and Northern Ireland, the Armenian people's great friend, Baroness Caroline Cox greeted everybody in Armenian and noted: "I am very happy to be back with your wonderful people in your historic country again. I am happy to be back here with members of the United Kingdom Parliament: members of House of Commons and members of House of Lords. We'll try to be your voice. And we'll to encourage British foreign policy to be supportive of your situation. But our hearts break with the suffering of your people, especially in Artsakh at this time. But we are here to stand alongside you, to speak for you. And we respect you. And I always say we thank you for holding the frontline of freedom and faith for the rest of the world."

## AUA Launches Artsakh Heritage Project to Safeguard Armenian Cultural Treasures



YEREVAN — In line with AUA's commitment to preserve Armenian cultural heritage, the Turpanjian Center for Policy Analysis (TCPA), in partnership with the Armenian General Benevolent Union and the Calouste Gulbenkian Foundation, has launched a project titled "The Armenian Cultural Heritage of Artsakh: Inventorying for Safeguarding." The initiative aims to enhance the protection of endangered Armenian treasures in Artsakh by compiling a preliminary inventory of those national treasures. A brand new website depicting the outcome of this year-long effort will target the international academic community, practitioners, and public at large as its primary audience.

The project was instituted against the backdrop of the systematic destruction of Armenian cultural heritage in Artsakh by Azerbaijan and the recent European Parliament Resolution (2022/2582 (RSP)) on the manifestations of intolerance towards the Armenian identity as a distinct violation of international law. The website will embrace approximately 5,000 monuments in Artsakh (with their respective photos and short descriptions), interlinked with a special map plugin; over 50 scholarly articles and reflections in international media outlets on the issue of Armenian cultural heritage during and following the 2020

Artsakh War; and about 25 relevant binding treaties, statutes, covenants, and other legal documents related to the protection of cultural heritage.

The team is led by AUA Political Science and International Relations Associate Professor Dr. Asbed Kotchikian, who is also the director of the TCPA, and comprises multidisciplinary scholars and associates: Nazenie Garibian, Ruzan Pluzyan, Bella Hakobjanyan, Nare Sukiasyan, Gagik Sargsyan, Nare Krmoyan, and Ripsime Jangiryan.

"As an indispensable part of a people's identity, cultural heritage is endowed with universal value that transcends national boundaries and, thus, imposes an obligation on the international community to protect and preserve it for the generations to come," says Dr. Kotchikian. "By providing ensured access to the comprehensive database of monuments along with other critical pieces of relevant information, we hope to equip international stakeholders with the necessary knowledge and tools to support their endeavors in protecting the Armenian cultural heritage of Artsakh."

Following the launch of the website, information on most of the monuments located in the regions of Askéran, Hadrout, and Martouni will be uploaded over the course of the year.

## Pashinyan, Blinken Discuss

Continued from page 1

after Azerbaijani troops seized a village in eastern Karabakh and tried to push deeper into the territory, sparking deadly fighting with Karabakh Defense forces.

Russia called for an immediate Azerbaijani withdrawal from the "zone of responsibility" of 2,000 Russian peacekeepers stationed in Karabakh.

The U.S. State Department likewise deplored the Azerbaijani troop

movements, calling them "irresponsible and unnecessarily provocative."

Pashinyan briefed Blinken on "the situation in Karabakh caused by the actions of Azerbaijani army units."

The two men also discussed U.S.-Armenian relations and the conflict in Ukraine, according to the official Armenian readout of their phone call.

Blinken and the State Department did not immediately issue any statements on the conversation.

## USC Institute of Armenian Studies Brings the Studio to LA in a Mobile Truck



LOS ANGELES -- With a mobile studio in a retrofitted food truck, USC Institute of Armenian Studies is traveling throughout Southern California to encourage and invite people to record their life stories.

#MyArmenianStory is a crowd-sourced oral history project that has thus far gathered nearly 100 interviews from around the world. The purpose of the project is to record, gather, and document individual stories and reconstitute them as part of the national story. The method is simple: enlist anyone who is willing to interview and/or be interviewed to discover and record family stories and more. Everyone's story is relevant, and together, they all make up the Armenian Story.

The Armenian experience of the 20th and 21st centuries is ingrained in the memories of the generations who lived it - California Armenians who lived in Boyle Heights, Hollywood and Pasadena, Soviet citizens who lived to see Armenian independence, and those caught in the Lebanese Civil War or the Iranian Revolution, refugees from Syria and Iraq, and so many others. These are Armenian stories that have individual value to families, but collectively, are essential history sources for scholars and creatives.

The Los Angeles County and the cities of Los Angeles, Glendale, and Pasadena celebrate Armenian heritage during the month of April and this is an opportunity to partner with city and community organizations to commemorate and remember in a way that

is meaningful and lasting.

The mobile studio, housed in a bright taco truck in USC colors, can be found throughout Southern California. Individuals wanting to interview and be interviewed will be seated inside the truck, given guidelines and questions, and their conversation will be recorded.

For those interested in just being interviewed or would like to volunteer to do the interviewing, the Institute staff is ready to make a match. The testimony will be made available to the participants. And, anyone can receive detailed information and instructions on how to conduct interviews at home with loved ones, in person or remotely.

The ambition is to collect as many stories as possible for future reference as a primary source for scholars and artists interested in the global Armenian experience.

The recordings will be archived at USC Digital Libraries, and in other regional and global collections, thus accessible to researchers around the world.

While the mobile #MyArmenianStory Mobile Studio will travel for one month, the project as a whole will continue. Armenians around the world are encouraged to participate in this important initiative by interviewing and sharing their stories with the Institute. Questionnaires, guidelines and all needed information is available in English, French, Spanish and Russian, as well as Eastern and Western Armenian. Visit: <https://armenian.usc.edu/myarmenianstory/>

## Top Lawmakers Demand Investigation

Continued from page 1

Schiff, who represents Glendale, home to a sizable Armenian community, and is chair of the powerful House Intelligence Committee, said he was concerned by the "ordeal" faced by descendants of the genocide.

"I think all of us who read these stories have been horrified that some of the survivors and their families may have been victimized again," Schiff said in a statement. "I fully support an investigation to ensure all such survivors get the compensation they deserve."

Eshoo agreed that "a full investigation" was "absolutely warranted," adding: "It is shameful that fraudsters are profiting from the pain of the Armenian community."

The settlement in U.S. District Court in Los Angeles was overseen by Judge Christina A. Snyder from shortly after its filing in 1999. The Times described how various parties — the

Armenian Ministry of Justice, claimants, a lead attorney in the case and a court-appointed French settlement board — voiced concerns to Snyder about the handling of claims and settlement funds over a period of years.

Snyder greenlit some investigative efforts to uncover misconduct, but repeatedly denied a complete audit of the settlement.

"The court's refusal to grant an independent audit is equally puzzling," Speier said in the statement.

The Times' investigation relied on newly unsealed records, emails among attorneys and confidential settlement records. Authorities previously took action against three other lawyers in connection with the settlement.

Speier, the Bay Area congresswoman, raised the possibility of an investigation by the state auditor or state insurance commissioner.

Portantino said he wanted "continued investigation and transparency

## AGBU Hye Geen Opens 8th Pregnant Women Center In Armenia

**8**  
AGBU Hye Geen Pregnant Women's Center established in Armenia and Growing

**DONATE** to build our strong women and families

**Over 10,000 babies and moms nurtured and thousands of members supported since 2022**

AGBU HYE GEEN

- Vanadzor
- Talin
- Yeghvard
- Yerevan
- Charentsavan
- Stepanakert
- Sevan
- Etchmiadzin
- Gyumri  
The center in Gyumri relocated to Talin in 2008

PASADENA — Established in 1994, AGBU Hye Geen's mission is to aid and empower Armenian women, inspire them with a sense of purpose, raise their consciousness about social issues and contribute to civil society.

True to that mission, in 2002 AGBU Hye Geen launched an initiative whose time had come. It established a Pregnant Women's Center in Gyumri to provide much needed pre-natal then post-natal services to expectant mothers and the newborn. The Center also provided nutritional and psychological counseling, as well as group sessions to strengthen family relations. As of today Hye Geen counts more than 5300 healthy newborns.

Following the widespread success of this initiative and the pressing needs in Armenia's depressed regions, AGBU Hye Geen's members devoted themselves to fundraising through well organized events for the establishment

of more centers. In time, their hard work and the dedication of generous donors succeeded in promoting high quality care for pregnant women and the newborn in seven more regions.

Hard on the heels of the announcement of the 7th Center in Sevan, AGBU Hye Geen is ready to establish an 8th Center in Etchmiadzine, sponsored by the Sepetjian family. Known for its interest in public service, as well as connectivity to our Homeland, the Sepetjian family members were unanimous in their desire to establish a direct link to support pregnant women in need and the well-being of the newborn. Hence the Center will be named after the Sepetjian Family.

At a time of global crises, the commendable example of the Sepetjian family reinforces our commitment to provide a safety net to vulnerable women and children in our Homeland.

Sona Zeitlian

## NAASR Webinar with Taner Akcam to take "A Look Back, a Look Ahead"

BELMONT, MA — The National Association for Armenian Studies and Research (NAASR) will present a webinar with Taner Akcam, "A Look Back, A Look Ahead," on Tuesday, April 12, 2022, at 7:30 pm (Eastern) / 4:30 pm (Pacific).

The webinar will be accessible live on Zoom (registration required) and on NAASR's YouTube Channel.

Thirty years ago, Taner Akcam published his first book dealing with the Armenian Genocide—Türk Ulusal Kimligi ve Ermeni Sorunu (Turkish National Identity and the Armenian Question). This thirty-year period coincides with the advancement of Armenian Genocide Studies from a state of relative immaturity to where it stands today as a robust and vital field.

As he prepares to depart from his position as Kaloosdian-Mugar Chair in Armenian Genocide Studies at Clark University to become the inaugural director of the Armenian Genocide Research Program within the Promise Armenian Institute at UCLA, Akcam will engage in a conversation with NAASR Academic Director Marc A. Mamigonian that will touch on such topics as the evolution of Akcam's work, the history and development of Armenian Genocide Studies, the chal-



lenges facing the field, and his plans for the future in his new role.

Taner Akcam holds the Robert Aram and Marianne Kaloosdian and Stephen and Marian Mugar Chairholder in Armenian Genocide Studies at Clark University. His book publications include A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, The Young Turks' Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire, and Killing Orders: Talat Pasha's Telegrams and the Armenian Genocide.

For more information contact NAASR at [hq@naasr.org](mailto:hq@naasr.org).

until the rightful recipients are justly compensated and any and all actions of

potential wrongdoing are exposed and properly dealt with."

### Արհեստական Բանականութեան Անվճար Դասընթաց Հայաստանի եւ Արցախի Դպրոցականներու Համար



ԵՐԵՎԱՆ

«Սինոփսիս Արմենիա»-ի նախագահին օրը կը սկսի հեռաձայնային գանգերով, կը շարունակուի՝ աշխատակիցներուն հետ հանդիպում-քննարկումներով: Երուանդ Զօրեանը իր աշխատասենեակին մէջ կը մնայ միայն քանի մը րոպէ: Անդադար աշխատակիցներուն հետ է, ոտքի վրայ:

Այսպէս՝ մինչեւ կ'աւարտի աշխատանքներու առաջին փուլը: Դուրսը Զօրեանն ու իր արհեստագիտակազմը կ'աշխատին նոր ծրագիրներու վրայ: Անոնցմէ մէկը կը վերաբերի արհեստական բանականութեան:

Երուանդ Զօրեանը կ'ըսէ, որ Հայաստանի մէջ 1000 աշխատակից ունեցող «Սինոփսիս»-ը մշտապէս արհեստագիտական փոփոխութիւններու մէջ է: Արհեստական բանականութեան շնորհիւ է, որ Հայաստանի մէջ կը ստեղծեն չիփեր, որոնք կրնան ինքնուրոյն կերպով վերանորոգուիլ:

Երեւանի մէջ կը ստեղծենք փոքր ու խելացի սարքեր, որոնք մաս կը կազմեն չիփերու: Անոնք կը կատարեն ոչ թէ չիփերու գործը, այլ կ'ապահովեն անոնց առողջութիւնը: Երբ սխալներ կ'ըլլան, անոնք

ինքնուրոյն կերպով կը սրբագրուին: Երբ կ'օգտագործէք ձեր հեռաձայնը, հեռատեսիլը կամ մեքենան, չիփը կը սրբագրուի մեքենաբար, երբ սխալներ կը պատահին: Այս սարքը կը պատրաստենք միայն Հայաստանի մէջ եւ աշխարհի մէջ միակն ենք:

Արհեստական բանականութիւն պիտի սորվին եւ յետագային պիտի կիրառեն նաեւ Հայաստանի եւ Արցախի աւագ դպրոցներու աշակերտները: Դասընթացը ստեղծուած է «Սինոփսիս» ընկերութեան հիմնադրամին աջակցութեամբ եւ ամբողջութեամբ թուայնացած է:

«Կանուխէն սկսիլը աւելի օգտակար է: Նկատեցինք, որ Սիլիքոնեան հովիտին մէջ կը սկսին աւագ դպրոցներէն՝ յատուկ ծրագիրներով: Ուզեցինք Հայաստանի մէջ ալ նոյնը ընել՝ սկսելով փոքր տարիքէն», - ըսաւ Երուանդ Զօրեանը:

Դասընթացը բաղկացած է տեսադասերէ, ունի հարուստ բազմատեսակ բովանդակութիւն՝ յազեցած էլեկտրոնային ուսուցման արդիական լուծումներով: Ուսուցումը պիտի ըլլայ ներգործօն եւ ուսա-

Շար.ը էջ 15

### Դադիվանքի Հայկական Վանական Համալիրի Որոմանկարներու Վերականգնման Աշխատանքներուն Նուիրուած Գիրքին Շնորհանդէսը



Նախաձեռնութեամբ Իտալիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան, մարտ 27-ին Հռոմի Սան Նիկոլայ տէ Թոլենթինո (Սուրբ Նիկողայոս) եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ ճարտարապետ Արա Զարեանի եւ վերականգնող Քրիստին Լամուրէի՝ Դադիվանքի հայկական վանական համալիրի որոմանկարներու վերականգնման աշխատանքներուն նուիրուած

«Դադի վանք Dadivank» գիրքին շնորհանդէսը:

Միջոցառումը տեղի ունեցաւ Հայաստանի եւ Իտալիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 30-ամեակին նուիրուած միջոցառումներու ծիրէն: Ներկաները ողջունեց եւ ելույթ ունեցաւ Իտալիոյ մէջ Հայաստանի

Շար.ը էջ 14

### Երեսուն Տարուայ Պատմութիւն Եւ Իրականացրած Շուրջ 1500 Լայնածաւալ Ծրագիր



«Հայաստան» համահայկական հիմնադրամը իրար կը կամրջէ Հայաստանը, Արցախն ու Սփիւռքը, որոնք համախմբուածութեամբ ու միասնականութեամբ ալ կ'իրագործէ հայրենիքի զարգացման ու կայացման, հասարակութեան համար կենսական կարեւորութիւն ունեցող բազմաբնոյթ ծրագրեր:

Ներկայիս հիմնադրամը կ'իրականացնէ լայնամասշտաբ այնպիսի ծրագրեր, որոնց շնորհիւ կը լուծուին սահմանային համայնքներու տարաբնոյթ խնդիրները: Սահմանին մօտ բնակավայրերու ջրամատակարարման շնորհիւ կ'որոշուին հողատարածքներ, արեւային վահանակներու եւ ջրատաքացուցիչներու շնորհիւ համայնքի բնակիչները կը տնտեսեն էլեկտրաուժանիւթը, ինչն ալ իր հերթին կը խթանէ գիւղական համայնքներու զարգացումը: Հիմնադրամը առաջնահերթ կը լուծէ նաեւ անօթեւաններու, մասնաւորապէս, արցախեան երկրորդ պատերազմի ընթացքին իրենց տունները կորսնցուցած արցախցիներու, ինչպէս նաեւ 1988 թուականի աղետալի երկրա շարժին հետեւանքով Կիւմրի քաղաքի տնակային աւաններուն մէջ բնակողներու կացարանով ապահովելու խնդիրները՝ կանխելով ժողովրդագրութեանը սպառնացող մարտահրաւերները:

Հիմնադրամը հոգեբանական եւ բժշկական լուրջ աջակցութիւն կը տրամադրէ պատերազմին վիրաւորուած զինուորներուն, ապահովելով անոնց վերին եւ ստորին վերջոյթներու փրոթեզաւորումը, ինչպէս նաեւ համալրումը հասարակութիւն, որ տղաներուն կ'օգնէ վերականգնուիլ ու հաստատական յառաջ շարժիլ: Իրականացնելով շարք մը կարեւոր ընկերային ծրագրեր, մասնաւորապէս, պատերազմի զոհուածներուն ընտանիքի անդամներուն, նաեւ վիրաւոր զինուորներուն կ'օգնէ ձեռք բերել նոր մասնագիտացումներ նորարարական ոլորտներու մէջ եւ ընդունուիլ աշխատանքի:

«Հայաստան» հիմնադրամը առաջիններէն էր, որ օրհասական պահուն ձեռք մեկնեց նաեւ Սփիւռքին՝ օգնելով Լիբանանի հայ համայնքին յաղթահարել քովիտեան ու Պէյրութի պայթումին ճգնաժամային օրերը: Հայաստանի, Սփիւռքի եւ Արցախի ճգնաժամային օրերուն, հիմնադրամը առաջին օրուրէն կ'ինքնակազմակերպուի ու գործի կը դնէ իր եւ համայն հայութեան ամբողջ ներուժը՝ ծանր օրերը յաղթահարելու համար:

Վերոնշեալ ծրագրերը հիմնադրամի նախաձեռնութիւններուն միայն փոքր մասը կը կազմեն, անոնք անվեր - ջանալի են ու բազմազան, որոնք հիմքին ին կած է կառոյցին նուիրական աշխատանքը:

«Հայաստան» հիմնադրամի ծաւալած գործունէութեան ամբողջական պատկերին մասին կը խօսին ստեղծման օրուրէն առ այսօր իրականացուցած նախագծերը, որոնց շնորհիւ հազարաւոր մարդիկ վերադարձած են բնականոն կեանք, շարունակած են ու կը շարունակեն ապրիլ ու զարգացնել իրենց հայրենիքը:

«Հայաստան» հիմնադրամի ստեղծման պատմութիւնն ու իրականացուցած ծրագրերը պատմական փաստերու տեսքով:

### Հայկազեան Հայագիտական Հանդէսը Այսուհետեւ Կը Հրատարակուի Երկու Գիրքով



Գոհունակութեամբ կը յայտնենք թէ նկատի առնելով որ արտասահմանէն թէ Հայաստանի ու Արցախի հանրապետութիւններէն, հայ եւ ոչ-հայ ուսումնասէրներու կողմէ Հայկազեան Հայագիտական Հանդէսին առաքուած գիտական բարձրորակ հետազօտութիւնները մեծապէս աւելցած են, Հանդէսի խմբագրութիւնը, Հայկազեան Համալսարանին տնօրէնութեան հետ համատեղութեամբ, որդեգրեց տարեկան երկու գիրք հրատարակելու որոշումը:

Հետեւաբար, Հայկազեան Հայագիտական Հանդէսի իւրաքանչիւր հատոր այսուհետեւ լոյս պիտի տեսնէ երկու գիրքով:

1970 թուականէն հրատարակուիլ սկսած Հայկազեան Հայագիտական Հանդէսը ցարդ հրատարակած է 41 հատոր, աւելի քան 22,000 էջ հայագիտական նիւթ, 1420 յօդուած, շուրջ 700 աշխատակիցներու միջոցով:

Հանդէսը զուտ հայագիտական բնոյթ ունի եւ կը հրատարակէ հայութեան անցեալին եւ ներկային, Սփիւռքին, Արցախի եւ Հայաստանի Հանրապետութիւններուն կենսագործունէութեան առնչուող գիտահետազօտական նիւթեր:

Հայկազեան Հայագիտական Հանդէս



# Մարեցան

## ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ

Մարեցան անոնք... Հակառակ մեր տենչանքին, հակառակ մեզի տրուած կամքին ու կիրքին մարեցան անհամար յոյսեր եւ յոյզեր: Հայր տեսաւ որ մարեցաւ իր օճախը, ջահը, ու աշխարհային կայծեր կենսուրախ: Իսկ երբեմն ինքը փորձեց մարել այն ամէնը, որ երջանկութեան աղբիւր էր, կեանքի նպատակ... Այսօր, յարգելի ընթերցող, երբ առկայծող օրերու անորոշութեան մէջ կը մարին մարդկային յոյսեր, հոգիներ քիչ քիչ կը մարին հոս ու հոն, ուզեցի լոյս սփռել «մարիլ» բայի գրական կայծերու վրայ, սոսկ ցոյց տալու համար, թէ չմարեցան անոնք: Արդ, քրքրենք հին մոխիրը, որ բոց դառնացան ու ստանայ նոր կեանք շերտ ու լուսաւոր:

«Մարիլ» բայը բուն հայկական է: Գրաբար հայերէնի մէջ ան «մայրիլ» էր, արմատը՝ «մայր», որ կը նշանակէ «խաւար, մթուփիւն»: Ասիկա է պատճառը, որ 1500 տարի առաջ ամէն իրիկուն «արեգակն ի մայրն դառնայր/մտանէր», այսինքն կը խաւարէր: Գաւառներու մէջ նոր երանգներ ստացաւ այս արտայայտութիւնը: Մթնշաղին հորիզոնին նայելով հիացիկ, սեքսատացի ըսաւ «մարը մը դնէլ», կարնեցին՝ «մարը մտնիլ», սալմաստցին «մար մնել», արցախցին «մար մըննէլ», գէյթունցին «մայր մօղնուլ», մուսալեռցին «միրիլ»: (Երբ լոյս տեսնէ այս յօդուածը, յարգելի ընթերցող, պէտք է որ մարի այն յօրինեալ կարծիքը, թէ երբ արեւը «մայր մտնէ» կը վերադառնայ իր «մօր»):

Գրաբարախօս մեր նախնիները «մարիլ» բայով շինեցին արտայայտութիւններ: Թէեւ անոնք այժմ մարած ըլլալ կ'երեւին, սակայն պատկերալից էին ու կ'արժէ մտաբերել անոնց ստեղծած պատկերը. «Արեւմայր, արեւմարք» վերջալոյս, «ի մայր դարձուցանել» մարել, ճրագը հանգցնել, «Մայր արեւու» մայրամուտ կամ արեւմուտք: «Մարիլ» բայը հին օրերուն նաեւ կը նշանակէր նուազիւ, ուշքը կորսնցնել, ձայնը քաշուիլ, շունչը հատնիլ: Անոնք, սակայն զարհուրելի չէին Սայաթ Նովայի համար, այնքան ատեն, որ եարի շունչով կատարուած ըլլային. «Յիս վառ շամ (մոմ) իմ՝ քու շնչովըտ կու մարիմ»:

Հայկական Ոսկեղարը վառ էր, ուշմիջնադարեան վերածնունդը կրակոտ ո՛չ մէկ նշան մարած ըլլալու: Ուստի, մինչեւ 19րդ դար, մինչեւ հիւժախաւար բանաստեղծներու օրերը պէտք էր սպասել, որ մեր գրականութիւնը ճաճանչէր «մարած» տողիկներով: Ճշմարտութիւնը այն է, որ Մաշտոցներու, Նարեկացիներու եւ Շնորհալիներու մատենագրարանի միակ «մայր»ը Մարիամ Աստուածածինն էր ու մայրամուտի շողերը չէին տրամեր անոնց մատենաներու մէջ:

19րդ դարուն, սակայն, հայ քնարերգակի հոգին պայծառապէս խաւարեցաւ ու տրամութիւնը իր մութ ծալքերով քօղարկեց անոր ժպիտը: Այդ բանաստեղծներու շարքէն էր Արշակ Չօպանեանը: Ան նշմարեց, թէ ինչ խեղճ էր հայրենիքի վիճակը ու գրեց. «Մեծցաւ հեղեղն ու զգեստնեց քեզ մոլեգին / Ու մարեց բոցը թափով իր ալիքին»: Նոյն օրերուն հերոս տղաներ

կը զոհուէին արեւը տեսնելու համար: Դանիէլ Վարուժանը գիտէր, թէ ամէն նահատակ ազատամարտիկի հետ կը մարէր նաեւ հարսի ճրագը. «Հերոս տղաս հոն զարնուած է սրտէն. Ախ հարս, ճրագդ մարէ...»:

Այլ բանաստեղծներ, որոնք սիրախաւար էին, քնարական ու նուազուստողիկներ յօրինեցին: Պետրոս Դուրեանը ըսաւ. «Ո՛հ, այն հուր աչերդ, որ իմ սիրտս վառեցին, վերջապէս պիտի մարին...», «Եւ դուք՝ կրա՛կք սիրոյ, մարիք շուտ եւ դուք, Տեւէք ինչպէս վերջալոյսն այս բոցաշուք»: Դուրեանի ամենասիրած ժա՞մը... Մայրամուտը, անկասկած. «Հուր հորիզոնն մարեցաւ, / Երկինքն աստղեր փթթեցան, / Համբոյր մ'առի դարձեալ ես»: Միսաք Մեծարենցը յօրինեց լուսաւոր տողիկներ. «Թո՛ղ մարին լոյսերն ամէն, / Ու մեռնին յոյզ ու ժխոր... Գիշերուայ վերջին պահերուն լռին / Զայներն ու լոյսեր յանկարծ կը մարին»: Մեծարենցի ամենասիրած ժա՞մը... Մայրամուտը, անկասկած... «Բոլոր լոյսերն ալ մարեցան հետզհետէ. / Ես կը սիրեմ այս խաւարը տառապագին»: Տառապած մէկ այլ բանաստեղծ էր Մատթէոս Զարիֆեանը: Օր մը ան նստեցաւ լամբին առջեւ ու ըսաւ. «Այս գիշեր բոլոր լոյսերը մարեցի եւ դաշինք կնքեցի իմ յոռեգոյն բնագոններուս հետ»:

Ապա, մեղմիկ պահ մըն էր, գրեց երկու տող, որպէս թոքախաւարի ինքնակենսագրութիւն. «Աստղեր՝ որ շատ կը հեւան, / Ու կարծես թէ կը մեռնին. / Բայց այնպիսի լո՛յս մ'ունին, / Որ կը մարին ... բաց միշտ կան»: Ի՞նչ էր անոր միակ ծարաւը: Ապաւէն ուս մը կոյսի. «Երբ մարեցաւ աստղը բարի՛ / Գլուխս իր ուսին գրի»: Վահան Տերեանի բառերը կարծես հրաժեշտի խօսքեր ըլլային. «Ինձ թաղէք, երբ կարմիր վերջալոյսն է մարում»: Վահան Թէքէեանը ըսաւ, թէ սիրով պիտի ընդունէր գիւղական խրճիթի մը մէջ «իրիկուն մը մարիլ շրջապատուած վարդերէ»: Ռուբէն Սեւակը յուսահատ շնչաց. «Այտերն ի վար, ուր յաւէտ / Կը տոչորի հետքը վերջին համբոյրին, / Իջի՛ր, արցունք, զովութեանդ մէջ երկնակէտ. / Թող սէրերու յետին բոցերը մարին»:

Կասկած չկայ, թէ մեյրամաղձոտ հեղինակները շատ են սիրած «Արեւը մարիլ» դարձուածքը: Ըստ երեւոյթի, գոյութիւն ունի անոր հետ ցաւոտ պատկերներ գրի առնելու աւանդութիւն: Ահա քանի մը նմոյշ. «Ո՛չ, ո՛չ, Լանկիթիմուր չի կործանեց այն քաղաքները, այլ Լանկիթիմուրէն գօրաւոր ոգի մը՝ անմիութիւնը, որ Հայաստանի արեւը մարեց», Պետրոս Դուրեան, «Ո՛վ հեզ եւ վեհդ իմ Հայաստան, մարեցաւ քու արեւդ, ո՛վ Հայք, կորաւ ձեր ապագան», Մաթեոս Մամուրեան, «Եւ գիտեմ, որտեղ էլ մարի արեւս՝ / Իմ շիրմին կը հասնի նրա մի տերեւը», Գեւորգ Էմին:

Այլ բանաստեղծներ «մարիլ» բայը յարմար գտան իմաստասիրելու համար: Երուխանը խոստովանեցաւ. «Հպարտութեան վերջին կայծը մարեցաւ»: Տիգրան Զէօկիւրեանը յայտարարեց, թէ հասեր է կեանքի նոր հանգրուան. «Ես բան մը չեմ ուզեր կեանքէն երկար ատենէ ի վեր, նախասիրութիւններս հրաժեշտ առնի ինչ, փառքի տենչանքն ալ մարեցի»: Ինտրան



ներաշխարհի հաշուեյարդար կատարեց. «Հոգւոյն մէջ յածող յետամնաց պգտի հրճուանքները կը մարին. ահաւասիկ անձրեւէն մարած են բոլոր հրճուանքները, բոլոր կայծերը»:

1912 թուականին երբ Լեւոն Շանթի «Հին Աստուածներ» թատերախաղը լոյս տեսաւ անհամար վէճեր ծագեցան, թէ արդեօք կարելի՞ էր աշխարհիկ կայծերը մարել: Ունկնդիր ըլլանք Մարիամ Իշխանուհիի եւ Վանահօր երկխօսութեան. ՎԱՆԱՀԱՅՐԸ ... Վերջ տանք: Ի՞նչ միտք ունի այդ հին ու մարած

մոխիրը խառնելը: ԻՇԽԱՆՈՒՀԻՆ - Մարա՞ծ: ՎԱՆԱՀԱՅՐԸ - Այո, այդ անողոք յուշերն ալ միւս բոլոր աշխարհային ցաւերուս հետ սրտէս դուրս քամեցի այն օրը, երբ վրաս առի այս վերարկուն, [...] երբ մարեցան բոլոր աշխարհիկ կայծերը: ԻՇԽԱՆՈՒՀԻՆ - Ո՛չ կ'ըսեմ քեզի, չմարեցան այդ կայծերը... Աշխատեցար որ մարես... Բայց չմարեցիր, չէիր կրնար»:

«Մարիլ» բառը այսօր իր բազմաթիւ իմաստներով կը փայլի

Շար.ը էջ 14



## DETERMINED & COMPASSIONATE CRIMINAL DEFENSE

- JUVENILE DEFENSE ◦ DOMESTIC VIOLENCE
- ASSAULT & BATTERY CHARGES
- DRIVING UNDER THE INFLUENCE (DUI)
- VEHICULAR OFFENSES/HIT AND RUN
- IMMIGRATION - MOTION TO VACATE A PLEA
- ROBBERY AND THEFT OFFENSES
- ASSAULT WITH A DEADLY WEAPON
- CRIMES INVOLVING POLICE OFFICERS
- CRIMINAL THREATS ◦ WEAPON CHARGES
- DRUG OFFENSES ◦ SEX CRIMES
- THEFT CRIMES ◦ GANG CRIMES



**ALICE TAVOUKJIAN**  
Attorney At Law

At the law office of ALICE TAVOUKJIAN, we provide zealous representation to achieve the best possible outcome on your behalf.

LAW OFFICES OF  
**ALICE TAVOUKJIAN, PC**

www.TAVOUKJIANLAW.com    CALL FOR A FREE CONSULTATION  
135 E. Valley Bl, #B, Alhambra, CA 91801    **626.386.8606**



### ՄԱՅԱԶՊ



**ՍԷՐԱ ԱՅՆԹԷՊԼԵԱՆ**  
(Ծնեալ՝ 20 Յունուար 2002ին, Ջալքա, Լիբանան)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ դասեր, թոռնուհիին, եղբօր դասեր, քրոջ դասեր, զարմուհիին եւ հարազատին՝ Սէրա Այնթէպլեանի անակնկալ մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 24 Մարտ 2022ին, ինքնաշարժի արկածի հետեւանքով:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Հինգշաբթի, 7 Ապրիլ 2022ին, առաւօտեան ժամը 9ին, Փաստօրինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado St., Pasadena, CA 91107, ապա թաղումը՝ կէսօրէն առաջ ժամը 11:30ին, Live Oak Memorial Park գերեզմանատան մէջ, 200 E. Duarte Rd., Monrovia, CA 91016:

Հոգեճաշ պիտի մատուցուի եկեղեցւոյ «Կիրակոսեան» սրահին մէջ:

- Սգակիրներ՝ Ծնողքը՝ Ժանօ եւ Ճէնի Այնթէպլեան
- Մեծ մայրը՝ Մանիշակ Եսայեան
- Հօրաքոյրը՝ Անի եւ Ալէքս Գոստաքեան (Գանատա)
- Մօրաքոյրը՝ Ալին եւ Առաքել Օհաննէսեան եւ դուստրերը՝ Սինթիա եւ Սելին (Լիբանան)
- Մօրեղբայրը՝ Վիգէն Եսայեան եւ դուստրը՝ Ռօզալիթա (Լիբանան)
- Մօրեղբայրը՝ Ռօժէ եւ Թալին Եսայեան եւ դուստրը՝ Ռուպի (Լիբանան)
- Եւ համայն հարազատները, ընկերներն ու բարեկամները:

### ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

Սէրա Այնթէպլեանի մահուան տխուր առիթով, Հ.Կ.Բ.Մ.ի վարչութիւնն ու անդամները իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ծնողներուն՝ Տէր եւ Տիկ. Ժանօ եւ Ճէնի Այնթէպլեաններուն, հարազատներուն ու բարեկամներուն:

## Արհեստական Բանականութեան Անվճար

Շարունակուած էջ 11-էն

նողներուն աշխուժ մասնակցութեամբ:

«Կ'ակնկալենք, որ դասընթացը ամբողջացուցած աշակերտները համալսարանական ընդունելութեան ատեն արդէն իսկ ունենան արհեստագիտական գիտելիքներ: Ապագային, արհեստական բանականութիւնը պիտի ըլլայ ամէն տեսակի ոլորտի մէջ», - պարզաբանեց Զօրեանը:

Տեսողասերը ներդրուած են Հայկական համալսարանի համալսարանի կրթական էլեկտրոնային հարթակին վրայ: Տրամադրելով իր հեռավար ուսուցման հարթակը՝ Հայկական համալսարանի համալսարանը պիտի ապահովէ եւ կազմակերպէ դպրոցներուն մէջ ուսուցման ամբողջ գործընթացը՝ էլեկտրոնային ուսուցման հեռավար կիսաոգնաց եղանակով:

«Այս դասընթացները շատերուն հասանելի դարձնելու եւ միայն քանի մը դպրոցով չբաւարարուելու համար, որդեգրեցինք համալսարանի ուսուցման միջոցը: Դասընթացը կ'սկսուի միջոցով, կ'օգտագործենք Հայկական

համալսարանի համալսարանին եղանակը», յաւելեց Զօրեանը:

Դասընթացին բովանդակութիւնը մշակած է «Միտփսիս Արմենիա»-ի կրթական բաժանմունքը, իսկ փորձագիտական գնահատումը իրականացուցած են ՀԲԸՄ Միլիթրոնային ինֆրատի մասնաճիւղն ու տեղեկատուական արհեստագիտութեան ոլորտի յառաջատար մասնագէտները:

«Մակարդակը այնպէս մըն է, որ դպրոցական մակարդակի գիտելիքներով ըլլայ: Եթէ գայն կը պատրաստենք 10-րդ դասարանի համար, ապա 9-րդ դասարանին անոնց սորված թուաբանութեան հիման վրայ կ'ըլլայ», - եզրափակեց Զօրեանը:

Արդէն պատրաստ է աւագ դպրոցի 10-րդ դասարանի 15 մասնոց տեսողասեր, որ ունի ներգործօն ստուգումներ: Ան արդէն տեղադրուած է AVC հեռավար ուսուցման հարթակին վրայ եւ այս ապրիլին ալ պիտի տրուի անդրամիջակ մեկնարկը Արցախի մէջ: Հիմա մասնագէտները բովանդակութիւն կը ստեղծեն 11-րդ դասարանի համար: Արհեստական բանականութեան դասընթացը անվճար է:

## Ուխտանէս Եպիսկոպոս Պատմիչ

Շարունակուած էջ 11-էն

### Գնահատանք

Փրօֆ. Րոբերտ Հիւսըն (Հիւսնեան) գրած է թարգմանութեան նախաբանը յայտնելով որ Արեւմտեան Եւրոպայի Ղեւոնդ Երէցի ժամանակակից պատմագրութիւնը չէ տուած ա՛յն ինչ որ Ղեւոնդ ընծայած է Միջին Արեւելքի պատմագրութեան, եւ թէ ներկայ անգլերէն թարգմանութիւնը եղած է «յատակ եւ ընթեռնելի, ճոխացած պատմագրական եւ բնագրային ծանօթագրութիւններով»:

Հայրենի յայտնի արաբագէտ հեղինակ Արամ Տէր Ղեւոնդեան առաջինը եղաւ գրախօսական գրողը «Էջմիածին» ամսագրին մէջ, յայտնելով թէ «երկար ընդմիջումից յետոյ Ղեւոնդի «Պատմութիւն»ը 1982 թուականին մէկ տարում երկու հրատարակութիւն ունեցաւ՝ անգլերէն թարգմանութիւնը հեռաւոր Ատլանտեանի Ֆրիդլէնթիայում, եւ աշխարհաբար՝ Հայաստանի ոստանում», վերջինը՝ Տէր Ղեւոնդեանի կողմէ: Իր գնահատումով «Ղեւոնդի բնագրի անգլերէն լեզուն հարթ է եւ հարազատօրէն արտայայտուած է բովանդակութիւնը», նշելով նաեւ որ «հայերէն աղբիւրները գրեթէ ամբողջովին օգտագործուած են տարբեր հարցերի պարզաբանման համար»: Պատմագէտ Մարտիրոս Գալուքեան եւս գրախօսականները գրեց Ղեւոնդի եւ Ուխտանէսի թարգմանութեան մասին:

### Աղբիւրներ

Իմ գրած յառաջաբանին մէջ հաստատած եմ որ Ղեւոնդ Երէցի «Պատմութեան» աղբիւրները եղած են 7-րդ դարու Սեբէոս Եպիսկոպոսի «Պատմութիւն ի Հերակլին», եւ նոյն դարու Անանիա Շիրակացիի վերագրուած «Աշխարհացոյց»ը, ինչպէս նաեւ Աստուածաշունչ Մատեանը եւ յունարէն վաւերագիրները, ցոյց տալով միանգամայն Ղեւոնդի յաջորդող պատմիչներէն թովմաս Արծրունիի եւ Ասողիկ Տարոնացիի կողմէ Ղեւոնդի երկին օգտագործուած ըլլալը: Երկու պարագաներուն ալ Ղեւոնդի երկին համապատասխան նմոյշ հաստատումները դէմ դիմաց տրուած են որպէս օրինակներ:

### Համշնչնցներու Ծագումը

Համշնչի եւ համշնչիներու մասին արեւելահայ անծանօթ մը գրեր էր թէ «նրանց ծագումը թրքական է թէ հայկական, ինչո՞ւ եւ ե՞րբ են եկել համշնչիները եւ ո՞ւր են գնացել, մինչ այժմ հնարաւոր չի եղել այս հարցերին ոչ մի պարզօրոյ պատասխան տալ»: Կարդացի եւ զարմացայ երբ անանուն այս յօդուածագիրը շեշտակի կրկնելով իր հարցումը յայտնի կը դարձնէր որ 8-րդ դարու մեր Ղեւոնդ Պատմիչի Համշնչիներու տուեալներու մասին գաղափար իսկ չունի:

Մինչդեռ կանխագոյն եւ ամենէն հաւաստի մեր պատմիչը իր

վերջին 42-րդ գլուխը համշնչիներուն կը յատկացնէ որպէս գտարին հայեր եւ ոչ երբեք «Ռիզի Հեմշին եւ Չամլը Հեմշին բնակավայրերուն հետ» պատրուով ինչպէս կ'ենթադրէ գրութեան հեղինակը: Յիրաւի, Ղեւոնդ պատմիչի վերջին գլուխը ամբողջութեամբ յատկացուած է Համշնչին, ուր անոնց «ծննդոց»ը կը կարդանք Համշնչի 12,000 հայերու այլ, կին ու երախաներ, որոնք դէպի Սեւ Ծովու արեւելքը գաղթեցին՝ գլխաւորութեամբ Ամատունի տոհմէն հայր եւ որդի իշխաններու՝ ՇԱՊՈՒՀ եւ ՀԱՄԱՄ Ամատունիներու:

Ղեւոնդ պատմիչ յստակ կը գրէ թէ դէպի Համշնչի գաղթական այլ հայեր հիմնեցին ՀԱՄԱՄԱ-Շէն (Համշնչի) գաւառը գայն անուններով իշխանագուն Համամի անունով: Հայաստանէն գաղթը եղած է արաբ ոստիկան Ուպայտուլլայի Հայաստան արշաւէն ետք 788 թուին, երբ հայեր ստիպուած թողուցին իրենց այգիներն ու անասունները եւ փախան: Պատմիչի հաւաստումով «Հայեր թողուցին իրենց երկիրը եւ գաղթեցին Յունաց կողմը թիւով 12,000 առաջնորդութեամբ Շապուհ եւ Համամ Ամատունիներու եւ պաշտպանութեամբ Ամատունեաց զօրքին»: Ղեւոնդի հնագոյն տուեալներով 789-790 թուականներուն Համշնչը կը հիմնուի Սեւ Ծովու հարաւ-արեւելեան Սպեր գաւառի հիւսիսը, ձորոխ գետի հովիտին մէջ:

### «Ի ԳՈՒԷՆ ԽԱՅԻՐԼԻՔԵՐԱՅ»

Ղեւոնդի պատմագրութեան մէջ տարօրինակ «խաթիր լիթբերայ» բառը գործածուած է խազարներու թագաւորի բանակին առնչութեամբ, եւ բանասէրներ գայն որպէս յատուկ անուն կարդացեր են, իբր թէ զօրագունդը ենթակայ էր խաթիր լիթբեր անուն գորավարին: Մինչդեռ անմիջապէս նախորդող բառերը արդէն կուտան գորավարին իսկական անունը՝ «Ռաթթարխան, ի գնդէն խաթիր լիթբերայ»: Հաւանաբար ձեռագիր օրինակները չէ որ սխալ գրած են, այլ առաջին հրատարակիչները որոնք «Խ» գիրը գլխաւոր գրելով բառը վերածեր են յատուկ անունի:

Մինչդեռ այս աղաւաղուած բառը իմ կարծիքով թրքական ծագում ունեցող երկու, «խաթիր-լի» եւ «թապուր», բառերու միացումն է որ կը նշանակէ «յարգելի, ազդեցիկ» եւ «թապուր» որ բանակ կը նշանակէ, ինչպէս «քիւլթ-լի» (զօրաւոր) եւ «պերթեթ-լի» (օրհնուած) բառերը: Ուրեմն նախադասութիւնը թարգմանուելու է «Ռաթթարխան՝ ազդեցիկ բանակի գունդէն»: Այս բացատրութիւնը կարեւոր կը նկատեմ մեր հնօրեայ պատմագիրին պարագային, ինչպէս պատահած են ուրիշ պատմագրութեանց մէջ եւս: Այս մէկը սակայն մինչեւ օրս յայտնի չէր դարձած:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

### Արսէն Յարուժիւնեան Եւ Մալխաս Ամոյեան Դարձան Եւրոպայի Ախոյեաններ



Հայաստանի ազատ ոճի ըմբիշ Արսէն Յարուժիւնեանը Մարտ 31-ին ոսկի մեդալ նուաճեց Պուտայեշտի մէջ ընթացող ըմբշամարտի Եւրոպայի ախոյեանութեան մրցումներուն:

61 քի ծանրութեան մէջ եզրափակիչ մրցամարտին Հայ ըմբիշը ժամանակէն շուտ յաղթանակ տարաւ թուրք Սուլէյման Աթլիի նկատմամբ՝ 15:3 արդիւնքով:

Յունահռոմէական ոճի ըմբիշ Մալխաս Ամոյեան եւս ոսկի մետալ նուաճեց Պուտայեշտի մէջ:

77 քի ծանրութեան մէջ մարզիկը եզրափակիչին 4:3 արդիւնքով պարտութեան մատնեց թուրք Եոնուս Պաշրայի, հակառակ որ առաջին խաղափուլէն ետք կը գիշեր 0:3 արդիւնքով:

Այդպիսով, Մալխաս Ամոյեանը առաջին ոսկի մետալը ապահովեց Հայաստանի հաւաքականին:

Կիսաեզրափակիչ մենամարտին Մալխաս Ամոյեան պարտութեան մատնած էր Ատրպէյճանցի մրցակիցին:

### Մխիթարեանի Կոլին Շնորհիւ «Ռոման» Յաղթական



Իտալիոյ ախոյեանութեան 31-րդ հանգրուանին Հռոմի «Ռոման» ձեռնովայի մէջ մրցեցաւ տեղւոյն «Սամփտորիայի» հետ: Խաղը աւարտեցաւ հռոմէական ակումբի յաղթանակով: Միակ կողմը հանդիպման 27-րդ վայրկեանին նշանակեց կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը: Հայ ֆուտբոլիստը մասնակցեցաւ ամբողջ խաղին:

Այս յաղթանակէն յետոյ «Ռոման» վաստակեցաւ 54 կէտ եւ բարձրացաւ 5-րդ հորիզոնական:

«Ռոման» յաջորդ հանգրուանին պիտի խաղայ «Սալերնիտանային» հետ: Այդ հանդիպումը տեղի պիտի ունենայ Ապրիլ 10-ին:

### «Ինթեր» Ուժեղ Էր «Եուվենթուսէն»

Իտալիոյ առաջնութեան 31-րդ հանգրուանին ախոյեան «Ինթեր» թուրինի մէջ խաղցաւ «Եուվենթուսի» հետ: Միլանեան խումբը առաւելութեան հասաւ նուազագոյն հաշուով:

Իտալացի Սիմոնէ Ինձագիի գլխավորած խումբին յաղթանակ բերաւ առաջին խաղակէսի աւելացուած ժամանակին թուրք կիսապաշտպան Հական Չալհանթուրի կատարած 11 մեթրանոցը:

30 խաղէն յետոյ «Ինթեր» 63 կէտով երրորդն է, «Եուվենթուս» (31 խաղ) չորրորդն է՝ 59 կէտ:

### ՊՍՏ-ի Յաղթանակը՝ 5:1

Ֆրանսայի առաջնութեան 30-րդ հանգրուանին ՊՍՏ-ն ընդունեց «Լորիանին»: Արժենթինացի Մաուրիսիո Պոչեթինոյի գլխավորած խումբը յաղթանակ արձանագրեց 5-1 արդիւնքով:

12-րդ վայրկեանին խաղի հաշիւը բացաւ պրագիլացի յարձակող Նեյմարը, այնուհետեւ ՊՍՏ-էն երկու կողմ հեղինակ դարձաւ ֆրանսացի յարձակող Կիլիան Մփապէն, որ նաեւ կողային փոխանցում կատարեց արժենթինացի յարձակող Լիոնել Մեսիին: 90-րդ վայրկեանին երկրորդ

### Մոնտիալ-2022 Վիճակահանութեան Արդիւնքները Յայտնի Են

GROUP A	GROUP B	GROUP C	GROUP D
QATAR	ENGLAND	ARGENTINA	FRANCE
ECUADOR	IRAN	SAUDI ARABIA	AUS/EAU vs PE
SENEGAL	USA	MEXICO	DENMARK
NETHERLANDS	EUROPE PLAYOFFS UKR/SCO vs WAL	POLAND	TUNISIA
GROUP E	GROUP F	GROUP G	GROUP H
SPAIN	BELGIUM	BRAZIL	PORTUGAL
OSANIA-CONGRAF PLAYOFFS NZ vs CR	CANADA	SERBIA	GHANA
GERMANY	MOROCCO	SWITZERLAND	URUGUAY
JAPAN	CROATIA	CAMEROON	SOUTH KOREA

Ֆուտբոլի Աշխարհի Բաժակի աւարտականներու վիճակահանութեան արդիւնքները յայտնի են:

Ապրիլ 1-ին, Քաթարի մայրաքաղաք Տոհայի մէջ կայացած վիճակահանութեան արդիւնքով ձեւաւորուեցան հետեւեալ խմբակները.

- A խմբակ. Քաթար, Էկուատոր, Սենեկալ, Հոլանտա:
- B խմբակ. Անգլիա, Իրան, ԱՄՆ, Սկոտլիա, Ուքրանիա կամ Կալէս (Ուելս)
- C խմբակ. Արժենթին, Սէուտեան Արաբիա, Մեքսիքո, Լեհաստան:
- D խմբակ. Ֆրանսա, Փերու, Աւստրալիա կամ ԱՄԷ, Տանիմարք, Թունիզ
- E խմբակ. Սպանիա, Քոսթա Ռիքա կամ Նոր Զելանտա, Գերմանիա, Ճափոն
- F խմբակ. Պելճիքա, Գանատա, Մարոք, Խրուաթիա
- G խմբակ. Պրագիլ, Սերպիա, Զուիցերիա, Քամբոժ
- H խմբակ. Փորթուգալ, Կանա, Ուրուգուէյ, Հարաւային Քորեա

Ֆուտբոլի Աշխարհի Բաժակի 2022 թուականի աւարտականները պատմութեան մէջ առաջին անգամ տեղի կ'ունենայ ձմռան՝ Նոյեմբեր 21-էն Դեկտեմբերի 18-ը, Քաթարի մէջ:

### «Պարսելոնան» Յաղթեց «Սելիլիային» Եւ Բարձրացաւ Երկրորդ Տեղ

Սպանիոյ առաջնութեան 30-րդ հանգրուանին «Պարսելոնան» սեփական դաշտին վրայ մրցեցաւ «Սելիլիայի» հետ: Չաւիի գլխավորած խումբը յաղթեց նուազագոյն հաշուով:

72-րդ վայրկեանին ֆրանսացի յարձակող Ուսման Տեմպելի փոխանցումէն յետոյ յաղթական կողմ նշանակեց սպանացի կիսապաշտպան Փետրին:

«Պարսելոնան» (29 խաղ) 57 կէտով բարձրացաւ երկրորդ տեղ: «Սելիլիան» (30 խաղ) նոյնքան կէտով չորրորդն է: Ախոյեան «Աթլետիքոն» (30 խաղ) նոյնպէս ունի 57 միւտոր եւ երրորդն է: Առաջատարը «Ռեալն» է՝ 69 կէտ:

### «Լիվերփուլ» Եւ «Մանչեսթեր Սիթի» Յաղթեցին

Անգլիոյ առաջնութեան 31-րդ հանգրուանին «Լիվերփուլ» ընդունեց «Ուոլթֆորտին»: Գերմանացի Եուրգեն Կլոպի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 2:0 սարդիւնքով՝ արձանագրելով 10-րդ անընդմէջ յաղթանակը Փրեմիեր Լիգայի մէջ:

22-րդ վայրկեանին աչքի ինկաւ փորթուգալացի յարձակող Տիկէկօ Ժոտան: 89-րդ վայրկեանին դաշտի տէրերու առաւելութիւնը կրկնապատկեց պրագիլացի կիսապաշտպան Ֆապինիոն, որու 11 մեթրանոցը դրական արդիւնք տուաւ:

Ախոյեան «Մանչեսթեր Սիթին» նոյնպէս 2:0 արդիւնքով յաղթեց «Պրերնլիին» եւ 73 կէտով կը շարունակէ գլխավորել աղիւսակը: «Լիվերփուլ» 72 կէտով երկրորդ դիրքի վրայ է:



Կողմ նշանակեց նաեւ Նեյմարը: ՊՍՏ-ն 68 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 12 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Մարսելէն»: